

## ՏԱՎՐԻՅԱՆ ՀԱՅՆԵՐԸ ԵՎ ՌՈՒՍ-ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Ռուս, ուկրաինացի, լեհ և սլավոն մյուս ժողովուրդների հետ հայ ժողովրդի ուղղափառական, տնտեսական և մշակութային կապերն ու մերձեցումը, սկզբնավորվելով զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանից, իրականացվել են ոչ միայն բուն Հայաստանից, այլ նաև սլավոնական տարածքներում և սլավոնամերձ երկրներում հաստատված գաղթահայության կողմից: Պատմականորեն այդ երկույթի հիմքը սոսկ ռուս, ուկրաինացի, լեհ և մյուս ժողովուրդների հետ հայ ժողովրդի ունեցած ավանդական առնչությունների ամրապնդումը չէր: Հավանաբար, առաջին պլան էին մղվում տնտեսական և քաղաքական կյանքի թելադրանքով բարձրացող շահախնդրությունները, որոնք գաղութահայության սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչներին մղում էին կապերի մեջ մտնել այդ ժողովուրդների հետ: Այս առումով առանձնահատուկ է միջնադարի ամենախոշոր հայկական գաղութի՝ Ղրիմահայ գաղթախնների դերը: Գտնվելով մի կողմից բյուզանդական, թուրք-թաթարական, իսկ մյուս կողմից՝ ռուս-սլավոնական հարաբերությունների խառնարանում, Ղրիմահայերը, պատմական իրադարձությունների և տնտեսական կյանքի բերումով, իրենց ուժերի ներածին չափ մասնակից են եղել այդ հարաբերություններին՝ շարունակ կողմնորոշում ունենալով և համակրանք տածելով դեպի քրիստոնյա սլավոն ժողովուրդները, հանգամանք, որը լիովին համընկնում էր մայր հայրենիքի ժողովրդական զանգվածների փայփայած իղձերին ու բաղձանքներին:

Քրիստոնեության ընդունումից դեռևս շատ առաջ սլավոնները ծանոթ էին Ղրիմի թերակղզուն, որը հարավուսական տարածքների անմիջական շարունակությունն էր: Հնագետներից ոմանք այդ ծանոթության սկիզբ են համարում մ. թ. III դարը<sup>1</sup>: Ի դեմս մերձդնեպրյան սլավոնների տավրիկյան աշխարհի հետ նրանց շփումները ավելի նկատելի են դառնում<sup>2</sup>: Համենայն դեպս, ակադեմիկոս Վ. Դ. Գրեկովը չի կասկածում, որ մինչև IX դարը ռուսները գիտեին Ղրիմ տանող ուղիները<sup>3</sup>: Այս շփումները և հատկապես Սև ծովում ռուսների մշտապես նավարկելն է հիմք ծառայել, որ Մասուդին և Ալ-Յակուբին այն անվանել են Ռուսաց ծով: Մասուդին ուղղակի նշում է այդ, գրելով, թե ռուսներից զատ Ազովի և Սև ծովերում ոչ ոք չի նավարկում<sup>4</sup>: Սուրոժի (Սուդակի) եպիսկոպոս Ստեփանոսի (VIII դար) վարքի հեղինակի պատմելով՝ եպիսկոպոսի մահվանից մի քանի տարի անց ռուս իշխան Բրավլինը արշավանք է ձեռնարկում դեպի Ղրիմ, վերցնում գերիներ, գրավում Սուրոժը և կողոպտում նրա եկեղեցին: Հիվանդանալով՝ նա երկյուղ է զգում իր արածի համար, վերադարձնում է գերիներին և բոյարների հետ մկրտվում քրիստոնյա: Մկրտության կարգն էլ կատարում է Ֆիլարետը՝ Ստեփանոսի հաջորդը<sup>5</sup>: XVI կամ XVII

<sup>1</sup> Е. В. Вейман, С. Ф. Стрежелецкий, К вопросу о славянах в Крыму («Вопросы истории», 1952, № 4, с. 94).

<sup>2</sup> В. Г. Васильевский, Записки готского монарха («Труды», II, в. I, 1909, с. 133—212).

<sup>3</sup> В. Д. Греков, «Повесть временных лет». О походе Владимира на Корсунь («Известия Таврического об-ва истории, археологии и этнографии», 1929, № 3, с. 100).

<sup>4</sup> А. Я. Гаркави, Сказания мусульманских писателей о славянах и русских, СПб., 1870, с. 125—138.

<sup>5</sup> «О походе руссов на Сурож» (ЗООИД, т. 1, 1844, с. 191—193).

դարի վարքագիր-հեղինակը, հավանաբար, իր ձեռքի տակ որոշակի աղբյուր է ունեցել այս պատումը արձանագրելիս, որը կարող էր IX դարի սկզբներին դեպի Ղրիմ ուսնների կատարած արշավանքի ուղղակի արձագանքը լինել:

945 թ. Բյուզանդիայի հետ կնքված պայմանագրով Կիևի իշխան Իգորը պարտավորվել էր կանխել բուլղարների՝ Կորսունյան երկիր<sup>6</sup> ձեռնարկվելիք արշավանքը, քանի որ դրանից տուժելու էին նաև ուսական տարածքները: Ուրեմն, ուսական տիրույթները մոտիկ են գտնվել Ղրիմին: Այդ առաջին և, երկրորդ, միայն այդպիսի պարագայում հնարավոր կդառնար արգելք կանգնել բուլղարների հարձակողական գործողություններին:

Ռուսական շրջանների հետ քաղաքական և այլ տեսակի շփումներին ղրիմահայերի ցուցաբերած մասնակցությանը հնարավոր է հետևել X դարից ի վեր: Թեև դրանք էպիգրաֆիկ բնույթի էին, բայց, այնուամենայնիվ, վաղնջական սկիզբն էին նրանց առևտրա-տնտեսական և դիվանագիտական-քաղաքական հետագա աշխույժ գործունեության ուսական պետության մեջ՝ XV—XVIII դարերում: X դարում ներսոսնեսում հաստատված հայազգի իշխան Կալոկիրի միջոցով, օրինակ, Բյուզանդիան ջանքեր էր թափում լեզու գտնելու Կիևի իշխան Սվյատոսլավի հետ՝ բուլղարների դեմ համագործակցելու բացահայտ առաջարկով:

Հայ-ուսական ռազմաքաղաքական գործակցության դրսևորումներից էր Գալիցիայի իշխան Ֆեոդոր Դմիտրիևիչի 1062 թ. հրովարտակը, որով նա ղրիմահայերին իրեն օգնության էր կանչում՝ նրանց խոստանալով արտոնություններ իր իշխանության սահմաններում («Ահա մեծ իշխան Ֆեոդոր Դմիտրիևիչից կոստխացի հայերին: [Նրանք], ուլքեր կցանկանան այստեղ գալ, և ես ձեզ կտամ ազատություն երեք տարով, իսկ երբ կլինեք իմ հպատակները, ով ուր կամենա, այնտեղ ազատորեն բնակություն կհաստատի»)<sup>7</sup>: Սույն փաստաթղթի վավերականությունը կասկածի տակ է առել լվովցի պատմաբան Յա. Դաշկևիչը, իսկ Ն. Փորքշեյանը, ընդունելով վավերականությունը, գտել է, որ իշխանը հրավիրել է ոչ թե Ղրիմի, այլ Չերքեզիայի հայերին<sup>8</sup>: Թե առաջինի և թե երկրորդի փաստարկումները անհիմն են, իսկ Յա. Դաշկևիչինը, բացի այդ, միանգամայն միտումնավոր են և ոչ գիտական: Չանդրադառնալով հարցի մանրամասն բնույթին, նշենք, սակայն, որ 1641 թ. կհաստանի թագավորական գրասենյակի կողմից հրովարտակի վերահաստատման փաստն իսկ բավական է, որպեսզի հօդս ցնդեն հրովարտակի կեղծված լինելու վերաբերյալ Յա. Դաշկևիչի հորինած «փաստարկները»: Այս կապակցությամբ վավարարվենք միայն հին ուսական հրովարտակների և տարեգրությունների հոլանդավոր գիտակ ակադեմիկոս Մ. Ն. Տիխոմիրովի խոսքերը բերելով, իսկ հարցի էությունը ավելի հանգամանորեն ծանոթանալ ցանկացողներին վկայակոչենք մեր հոդվածն ու գրքի համապատասխան հատվածը և Մ. Ն. Տիխոմիրովի ելույթը՝ Կամենեց-Պոդոլսկի 900-ամյակի առթիվ<sup>10</sup>, «Յա. Դաշկևիչի փաստարկները,— ասել է Մ. Ն. Տիխոմիրովը, ընդհանրացնելով իր մտքերը,— մակերեսային են, միտումնավոր, ոչ մի ապացույցով չեն ամրապնդված և ուրեմն՝ գիտական հետազոտության հետ ընդհանուր ոչ մի բան չունեն»: Տեղին է ավելացնել, որ «կոստխացի» («КОСОХАЦКИМ») բառի տակ, կարծում ենք, իշխանը նկատի է ունեցել ոչ թե Կոստիայի (Չերքեզիայի) հայերին, ինչպես

<sup>6</sup> А. П. Смирнов, К вопросу о славянах в Крыму (ВДИ, 1953, №3, с. 33).

<sup>7</sup> Ю. Кулаковский, Прошлое Тавриды, Киев, 1914, с. 112.

<sup>8</sup> Я. Дашкевич, Грамота Феодора Дмитриевича 1062 года («Научно-информационный бюллетень Архивного управления УРСР», Киев, 1962, № 4, с. 10).

<sup>9</sup> Я. Дашкевич, указ. соч., т. II. Ф о р ք շ ե յ ան, Ե՛րբ և որտեղի՞ց են հայերը գաղթել Չերքեզիա («Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 236—238):

<sup>10</sup> «Прапор жовтня» (газета), Каменец-Подольск, 27. IX. 1962; Б. А. Микаелян, К вопросу о грамоте князя Феодора Дмитриевича («Археографический ежегодник» за 1964, М., 1965, с. 11—18, ն ու չ ն ի՝ Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964, էջ 51—63:

կարծել է ն. Փորբշխյանը, այլ կորսունեցի (ղրիմեցի) կամ կազարաթցի (զրիմեցի—казарайским) հայերին:

Արդեն XIII—XIV դարերում հայ և ուսու մասսաները շփման մեջ են եղել հենց Ղրիմում՝ որպես դրացի քրիստոնյա համայնքներ: Կաֆայի 1316 թ. կանոնադրության հատուկ հոդվածում արտացոլում է գտել այդ փաստը: «Կաֆայի հյուպատոսը չի կարող տնօրինություն անել այն հողին, որի վրա հնուց ի վեր (ընդգծումը—Վ. Մ.) գտնվում են հուլյների, հայերի և ուսուների եկեղեցիները և այդ եկեղեցիների վանքերը»<sup>11</sup>: Այս նույն ժամանակաշրջանում Սուդակի և Կաֆայի հայերի ջանքերով ազատագրվում էին ուսական և լեհական շրջաններից բերված քրիստոնյա գերիները<sup>12</sup>, մի երևույթ, որը հետագա դարերում հարձավ ավանդական:

Հայ-լեհական մշակութային առնչությունների դրսևորումներից էր, օրինակ, լեհաստանում դրիմահայերի համար Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» թարգմանությունը, որը 1519 թ. լատիներեն օրինակի հաստատման ժամանակ նույնպես ներկայացվել էր լեհաստանի թագավոր Սիգիզմունդին<sup>13</sup>:

Ռուսական պետության և պատմագիտական մտքի հետաքրքրությունը դեպի հայ ժողովուրդն ու նրա ցրված հատվածները արտացոլվել է XVII դարի ուսու հեղինակների գործերում: Ցակով Լիդովը, որը XVII դարի 30-ական թվականների կեսերին Բ. Դվորյանինովի դեսպանության կազմում երկարատև մրնացել էր Ղրիմում, գուտ անձնական հետաքրքրության դրդամամբ չէր, որ իր ուշադրության կենտրոնում էր պահել նաև տեղի հայերին՝ լմոռանալով ակնարկել նրանց և առհասարակ քրիստոնյաների նկատմամբ թաթարների գործադրած բռնությունների մասին<sup>14</sup>: Ռուսական իշխանությունները կարիք էին զգում տեղեկանալու, թե ինչ տրամադրություն է տիրում թերակղզու քրիստոնյա ժողովուրդների շրջանում դեպի թաթարական վերնախավը, որի նախաձեռնությամբ և գլխավորությամբ թաթարները պարբերաբար ասպատակում էին ուսուկրահինական գյուղերն ու քաղաքները:

Սլավոնական երկրների հետ դրիմահայոց ունեցած կապերում գերակշիռ նշանակություն ունի առևտուրը: Առևտրական կապերն էին, որոնց հետևանքով հաճախ ծնվում և զարգանում էին հարաբերությունների և համագործակցության այլ կողմերը: Առևտրական այդ կապերի զարգացման համար կային ավելի քան բարենպաստ պայմաններ: Նախ, սլավոնական երկրները Արևմուտքին անհրաժեշտ մի շարք ապրանքների՝ մանավանդ հացի ու մորթեղենի լավ աղբյուր էին: Երկրորդ, Ղրիմի վրայով էր իրականացվում արևելյան ապրանքների դեպի Եվրոպա և հակառակը՝ արևմտյան ապրանքների դեպի Արևելք առաքման ցամաքային ուղին, մի ուղի, որը կտրում էր ուկրահինական շրջանները և ապա մտնում դրանց կենտրոն Լվով, ուսկից այնուհետև շարունակվում դեպի Եվրոպայի վաճառաշահ քաղաքները: Արևմտաուկրահինական այդ քաղաքը, որը XIV—XVII դարերում նաև հայկական կերպարանք ուներ, դրիմահայոց ոչ միայն հաճախակի երթևեկի կայանն էր, այլ նաև երկարատև այնտեղ մնալու և արևմտաուկրահինական, լեհական ու գերմանական շրջաններում իրենց առևտրական գործերը գլուխ բերելու մի կարևոր հենակետ: Եվ հենց

11 «Հայ-իտալական առնչություններ: Ջենովական փաստաթղթերը դրիմահայերի մասին», կազմեց, առաջարկեց գրեց և ծանոթագրեց Վ. Ա. Միքայելյան, Երևան, 1974, էջ 30:

12 Ք. Վ. Քոչևերյան, Պատմություն գաղթականության երիմու հայոց, ս. Ղազար, 1895, էջ 93:

13 Վ. Բասամյան, Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 48:

14 И. Данневский, Очерки истории Инкермана. Одесса, 1855, с. 20.

\* Հոդվածի այս մասում տալիս ենք հիմնականում ուկրահինական և լեհական քաղաքներում գրիմահայերի առևտրական գործունեության համառոտ նկարագիրը. նյութի առատությունից ելնելով՝ բուն ուսական շրջանների հետ նրանց ունեցած առևտրական կապերը լուսաբանում ենք առանձին՝ հոդվածի վերջին էջերում:

դրանով պիտի բացատրել այն, որ Կաֆայի վաճառականական կապիտալի զորեղ ներկայացուցիչները հարկավորություն էին զգացել իրենց ջանքերով և սեփական դրամաքսակի հաշվին 1363 թ. կառուցել Լվովի հայկական նշանավոր մայր տաճարը<sup>15</sup>, որը ցօրս կանգուն է՝ խորհրդանշելով հայ-ուկրաինացի, ռուս և լեհ ժողովուրդների բարեկամության թերևս ամենափայլուն դրվագներին մեկը:

Ջենովացիների ժամանակ, ինչպես նաև XVI—XVIII դարերում Կաֆայի, ապա նաև Ղարասուբազարի և Արմյանսկի Բազարի հայերը առևտրական սերտ կապերի մեջ էին Լվովի, իսկ նրա վրայով նաև Արևմուտքի հետ: Լվովում և Գալիցիայի այլ վայրերում, ընդառաջ գնալով տարանցիկ առևտրի ծավալման միտումներին, զրիմահայ վաճառականները նույնիսկ մշտական գործակալներ էին պահում<sup>16</sup>:

Արևմտաուկրաինական շրջաններում զրիմահայ վաճառականության և առհասարակ առևտրական դասի ներկայացուցիչների գործունեությունը այնքան աչքառու է եղել, որ չի վրիպել հայ գրիչների ուշադրությունից, արտացոլում է գտել նաև պետական-պաշտոնական գրագրություններում: 1633—1635 թթ. Կաֆայում գրված մի «Հայասմավորքի» հիշատակարանում, օրինակ, ասված է. «Երևեսիք զստացող սողա առաջի զենլոյն քրիստոսի զԿաֆայցի Դէմիրն որ էր տղայական հասակաւ և գնացեալ ի քաղաքն լեհաց վասն վաճառականութեան և եկեաց ի քաղաքն, որ կոչի Ծաշ»<sup>17</sup>: Լեհ-ուկրաինական շրջաններում առևտուր անող զրիմահայ վաճառականության որոշ ներկայացուցիչներ այնպիսի դիրքի էին հասել, որ նրանցով հետաքրքրվում էին կառավարող շրջանները, հանգամանք, որը, անշուշտ, բացատրվում է վերջիններիս որոշակի շահախնդրություններով: Այս առիթով վերին աստիճանի հետաքրքրի է զրիմահայ վաճառական Ավետիքի մասին 1509 թ. Մենզլի-Գիրեյ խանի կողմից Վասիլի ԻԻ-ին ուղղված հրովարտակը. «սրանից առաջ Կաֆայում ապրում էր մեր հպատակը, անունը Ավետիք, իմ ենթական,— ասված էր հրովարտակում,— և այժմ գնացել է թագավորական երկիր (Լեհաստան—Վ. Մ.) առևտուր անելու, իսկ թագավորական երկրից քո՝ իմ եղբոր երկիրն է եկել»<sup>18</sup>:

Կ. Պոլսի և Կաֆայի անկումից հետո, երբ նեղուցները ժամանակավորապես փակելու կապակցությամբ ցամաքային առևտուրը Արևմուտքի և Արևելքի միջև էլ ավելի մեծ կարևորություն է ստանում, զրիմահայ առևտրական դասի ու անավանդ միջին և խոշոր վաճառականության գործունեությունը Լվովում ու նրա վրայով Արևմուտքի հետ անհամեմատ մեծ շահերի է հասնում: Ղրիմի հայերը և Ղրիմի վրայով առևտուր անող արևելահայ ու արևմտահայ վաճառականները կատարում էին քարավանային երթևեկ, կազմակերպում արևելյան ապրանքների վաճառք՝ զրան մասնակից դարձնելով Լվովի, Կրակովի, Գդանսկի, Քյոլնի, Նյուրնբերգի և այլ վայրերի վաճառականներին<sup>19</sup>:

Այլևայլ երկրներում, այդ թվում նաև Ռուսաստանում, Լեհաստանում և արևմտաուկրաինական մարզերում XVI—XVIII դարերում զրիմահայ վաճառականների ծավալուն առևտրական գործունեությունը հաստատում են նրանց կնիքները, որոնք գործածվել են առևտրական պայմանագրերն ու նման բնույթի այլ փաստաթղթերը վավերացնելու համար: Այդ կնիքների վրա հայ վաճառականների անունների սկզբնատառերը փորագրված էին հայերեն, լատիներեն և ռուսերեն տառերով<sup>20</sup>:

<sup>15</sup> Մ. Բ ժ ղ Կ Ե ան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան..., Վենետիկ, 1836, էջ 104.

<sup>16</sup> Մ. Աջառացի անվան մատենադարան, արխիվ, անհատ. անձանց ֆոնդ, թղթ. 137, վ. 63, թ. 2.

<sup>17</sup> Սատենադարան, ձեռ. № 9489, թ. 589.

<sup>18</sup> «Сборник русского исторического общества», т. 95, СПб., 1895, с. 76.

<sup>19</sup> «Հայրենիք», 1929, № 9, էջ 151.

<sup>20</sup> Սատենադարանի արխիվ, ֆ. կաթ. դիվան., վավ. 1, թղթ. 43:

XV դարի երկրորդ կեսը բնութագրվում է որպես ինչ-որ չափով հարաբերությունների աշխուժացման ժամանակաշրջան Ղրիմի խանության և Մոսկովյան պետության միջև: Վերջինիս հզորացումը Իվան III-ի օրոք խթանում է առևտրական և դիվանագիտական շփումները Ղրիմի խանության հետ: Ղրիմաճայերը գործուն մասնակցություն են ունենում այդ կապերին, մասնավորապես որ տնտեսական և քաղաքական շահախնդրություններից ելնելով՝ բացահայտ համակցված էին տաժում դեպի հյուսիս քրիստոնյա պետությունը: Հարաբերությունների կարգավորումը Ղրիմի խանության հետ Ռուսաստանին պետք էր նախ ամրապնդելու իր հարավային սահմանները, որոնք Ղրիմի թաթարները խախտում էին իրենց կողոպտչական հարձակումներով: Մյուս կողմից, Մենգլի-Գիրեյի և նրա որդիների ավերիչ արշավանքները դեպի լեհ-լիտվական ծայրամասային մարզերը օգնում էին Մոսկովյան նրա երկարատև պայքարում լիտվայի և լեհաստանի դեմ, որոնք զավթել էին ռուսական մի շարք հյուսիսային իջխանությունները: Իսկ խանությունն էլ, հանձինս Աստրախանի ուլունների վրա կաղակային հարձակումների, որոշակի օգնություն էր ստանում՝ «Մեծ Հորդայի» դեմ իր կողմից մղվող մշտական կռիվների ժամանակ, կրոնիկներ, որոնք ձեռնառու էին նաև Իվան III-ին<sup>21</sup>:

Դիվանագիտական կարգավորված հարաբերությունները խանության և Մոսկովյան միջև սկսվեցին XV դարի 70-ական թվականներից և տևեցին երեք տասնամյակ: Այդ հարաբերություններին նկատելի էր նաև ղրիմաճայ վաճառականների մասնակցությունը: Նրանցից էր, օրինակ, մեծահարուստ Պողոսը, որի շուրջը 1498—1502 թթ. դիվանագիտական երկարատև վեճ տեղի ունեցավ Մոսկովյան և Բախչիսարայի միջև: Կաֆայի թուրքական իշխանությունների և խանական արքունիքի մոտ որոշակի հեղինակության արժանացած Պողոսը 5—6 տարի շարունակ առևտուր էր անում Մոսկովյան պետության տարածքում, ուր և մահանում է, և Մոսկովյան մնացած նրա ապրանքները Ղրիմի իր բարեկամներին վերադարձնելու խնդիրը առիթ է տալիս դիվանագիտական հրկարատև և թե՛ մի քաջջուկի, որից պարզ երևում են երկու պետությունների միջև առևտուրը կարգավորող նորմերը: 1498 թ., ընդառաջելով Պողոսի եղբայր խոջա Կուլիի խնդրանքին, Մենգլի-Գիրեյը հատուկ հրովարտակով Իվան III-ից խնդրում էր հիվանդացած Պողոսին խոջա Լուֆտիի միջոցով ուղարկել Ղրիմ: Հրովարտակում Կուլին հորջորջվում էր որպես խանի բարեկամ, ասել է թե կաֆաճայ այդ գերդաստանը մոտիկ է կանգնած եղել խանական արքունիքին և Կաֆայի թուրքական վարչակարգին: Խանն ու Կաֆայի թուրքական փաշան ընդգծված շահագրգռվածություն են ցուցաբերում Պողոսի գործի նկատմամբ: «Այդ գործը,— գրում էր խանը,— ինձ շատ գլխացավանք է պատճառել: Այժմ եթե դու հիվանդ խոջային (Պողոսին—Վ. Մ.), հանձնելով խոջա Լուֆտիի ձեռքը, բաց թողնես, ապա դու, իմ եղբայր, ինձ խայտառակությունից՝ կազատես»<sup>22</sup>: Թուրք-թաթարական կողմի շահագրգռվածությունը չի վրիպում Իվան III-ի ուշադրությունից: 1499 թ. մարտի 16-ին նա դեսպան Ալեքսանդր Գոլոխովսուովի անունով իջեցրած հրովարտակում վերջինիս հրահանգավորում էր. «Եթե Կաֆայում կամ Յարգրաղում (Կ. Պոլսում—Վ. Մ.) թուրքական սուլթանի կամ նրա որդու՝ Կաֆայի սուլթանի անունից Պողոսի իրերի մասին հարցնեն, ապա դու նրանց կպատասխանես, որ այդ մարդը եղել է մեր թագավորի հողում, բայց այժմ մահացել է և մեր թագավորի մաքահավաքները հրամայել են նրա ապրանքը կնքել և պահել: Եվ եթե այդ մարդը երեխաներ և կամ իրեն աղգից որևէ մեկը ունի, և ձեր թագավորը, արդարու-

<sup>21</sup> «Известия АН СССР», VII серия, отд. общ. наук, № 3, 1932, с. 198 (статья В. Сыроечкова «Пути и условия сношения Москвы с Крымом на рубеже XVI века»).

<sup>22</sup> «Сборник русского исторического общества», т. 41, СПб., 1884, с. 271.

թյունը հարգելով, մեր թագավորի մոտ որևէ մեկին ուղարկի այդ ապրանքի-  
ետեից, ապա մեր թագավորը կհրամայի այդ ապրանքը նրան տալ»<sup>23</sup>։

Խանին շեն բավարարում իվան III-ի հավաստիացումները, քանի որ մաքս  
չվերցնելու հարցը իվան III-ը հեռատեսորեն շրջանցել էր, և վեճը, գուրս գա-  
լով մեկ անձին վերաբերող սահմաններից, տարածվում է միջազգային առև-  
տրի մի շարք նորմերի կարգավորման վրա։ Իվան III-ը չէր աճապարում գնալ  
զիջումների, քանի որ ձգտում էր ձեռք բերել երկուստեք հավասար իրավունք-  
ներ առևտրի ասպարեզում։ 1499 թ. Կաֆայի սուլթան Մահմեդ Շահադեն հա-  
տուկ դեսպանութուն է ուղարկում Մոսկվա և նրա անունով իջեցրած հրովար-  
տակով Պողոսի գործի կապակցությամբ խնդրում է վերջինիս ապրանքները  
առանց մաքսի հանձնել դեսպան Ալակոզին և դեսպանության անդամ հայ Բա-  
բեկին, խոստանալով նույն կերպ վարվել նման պարագաներում։ Նույնն էր  
խնդրում նաև Մենգլի-Գիրեյը, միաժամանակ հարկավոր համարելով մատնա-  
նշել, որ դրանով իվան III-ը կբարձրացնի իր՝ Մենգլի-Գիրեյի, հեղինակու-  
թյունը թուրքական իշխանութունների աչքում<sup>24</sup>։

Մյակայն իվան III-ն ու նրա պաշտոնյաները գիտեին թուրք-թաթարական  
կողմի հավաստիացումների արժեքը, գիտեին, որ, ամենևին չնոզալով իրենց  
միջազգային հեղինակության մասին, խանն ու սուլթանը կարիքը ծագած պա-  
հին դրժում էին իրենց խոսքը։ 1500 թ. Կաֆայի թուրքական փաշայի մոտ ու-  
ղարկված Անդրեյ Կուտուզովի միջոցով իվան III-ը բողոքում էր, որ տեղի  
մաքսահավաքները ուս դեսպաններից բռնի մաքսեր են վերցրել և վիրավո-  
րանքներ հասցրել ուս վաճառականներին<sup>25</sup>։ Իվան III-ը պահանջում էր մի-  
ջազգային կապերում ճանաչել հավասարության սկզբունքը՝ եթե ուս վաճա-  
ռականներից թուրք-թաթարական կողմը մաքսեր չգանձի, ապա ինքը Պողոսի  
ապրանքները կվերադարձնի առանց մաքս վերցնելու, «իսկ եթե ձեր (Կաֆա-  
յի փաշայի—Վ. Մ.) մաքսահավաքները մեր մարդկանցից և նրանց ապրանքից  
մաքս վերցնեն, որը (ապրանքը—Վ. Մ.) դուք կհրամայեք ձեր մաքսահավաք-  
ներին վերադարձնել մեր մարդկանց, ապա մենք ևս կհրամայենք մեր մաք-  
սահավաքներին այդ Պողոսի իրերից մաքս վերցնել»<sup>26</sup>։ Իվան III-ի դիրքորո-  
շումը հաղթում է, և 1502 թ. Պողոսի ապրանքները վերադարձվում են նրա եղ-  
բորը, իսկ դեսպանորդ Ա. Կուտուզովին՝ ուս վաճառականների ապրանք-  
ները<sup>27</sup>։

Իվան III-ը խանության հետ դիվանագիտական կապեր էր իրականացնում  
նաև Կաֆայի իր գործակալ Կոկոսի և Բամանի իշխան Ջախարիայի միջոցով,  
իսկ վերջինս երկար ժամանակ այդ գործերը կարգավորում էր զրիմահայ վա-  
ճառական Աստվածատուրի (Բոգդանի) մասնակցությամբ և ջանքերով։ Նախ  
այս Կակոսի (Կոկոսի) մասին, որը Կաֆայում XV դարի 70—80-ական թվա-  
կաններին իվան III-ի մշտական գործակալն էր։ Գրականության մեջ էստա-  
ֆետի կարգով մեկը մյուսին հետևելով՝ սրան, առանց հիմնավորման, հրեա-  
կան ծագում են վերագրել։ Մանրագնին քննությունը ցույց է տալիս, որ սա հայ  
էր և, հավանաբար, Մոսկվայի հետ կապված կաֆահայ ամենաազդեցիկ վա-  
ճառականներից՝ խոջաններից մեկը։ «Խոջա» մակդիրը երբեք հրեաների նը-  
կատմամբ չի գործածվել, մակդիր, որը, բացի վաճառական նշանակելուց, նաև  
մեծարման իմաստ էր ձեռք բերել։ Դա առաջին։ Երկրորդ՝ Կաֆայում մեծահա-  
րուստ վաճառականների թվում (XV դար) հրեաներ չկային։ Ծվ, վերջապես,  
Կակոս (Կոկոս) անունը շատ գործածական էր հայերի մեջ թե գաղթաշխար-  
հում և թե բուն Հայաստանում։ Իվան III-ը Կակոսի հետ սերտ կապեր էր պահ-  
պանում թե դիվանագիտական և թե մասնավոր առևտրական գործերով։ Կա-

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 282։

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 286։

<sup>25</sup> ЗООИД, т. V, с. 234.

<sup>26</sup> «Сборник русского исторического общества», т. 41, с. 295.

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 401։

կոսը ազդեցություն ունենալու և Կաֆայում (որպիսին հրեան XV դարում երբեք չէր կարող ունենալ) և թե Բախչիսարայում: Նա էր գլխավորապես Իվան III-ին մատակարարում թանկարժեք քարեր, որոնք իշխանը այնքան սիրում էր<sup>28</sup>, Բացի վերը նշածից կար մեկ այլ նկատառում. հազիվ թե Իվան III-ը իրեն գործակալ պահեր ոչ քրիստոնյա ազգի ներկայացուցիչին:

Անդրադառնանք, սակայն, Զախարիային և Աստվածատուրին: 1487 թ. Մոսկվա տեղափոխվելու ճանապարհին Զախարիային կողոպտում են և նա, վերադառնալով Զերկաս, Աստվածատուրի միջոցով հատուկ գրություն է հղում Իվան III-ին՝ խնդրելով օգնել իրեն: Աստվածատուրը Մոսկվայում մրնում է երկար ժամանակ: 1488 թ. նա արդեն կատարում էր Իվան III-ի դիվանագիտական հանձնարարությունները: Նրա միջոցով Իվան III-ը իջեցնում է երկու հրովարտակ՝ մեկը Մենգլի-Գիրեյ խանի, իսկ մյուսը՝ իշխան Դմիտրի Շեխնի անվանով: Մենգլի-Գիրեյը իր մարդկանց միջոցով պետք է ապահովեր Զախարիայի անվնաս տեղափոխումը մինչև ուսական սահմանները, իսկ ուս իշխանը նրան պիտի հասցնեի Մոսկվա<sup>29</sup>:

XVI դարի սկզբներից հարաբերությունները խանության և Մոսկովյան պետության միջև գնալով վատթարանում են, խաները թեքվում են լեհ-լիտվական կողմը, վերսկսելով ասպատակությունները ուսական շրջաններում: Լեհաստանի թագավոր Սիգիզմունդը շանք չի խնայում թաթարներին հրահրելու Մոսկվայի դեմ, մի վարքագիծ, որը դառնում է Լեհաստանի և Ռուսաստանի միջև 1512 թ. պատերազմական գործողությունների սկսման դրդապատճառներից մեկը<sup>30</sup>, Այս շրջանում ևս զրիմահայ վաճառականները մասնակցում են դիվանագիտական հարաբերություններին, նաև դառնում դիվանագիտական գրագրությունների նշանակետ: 1509 թ. Մոսկվայի և Ղրիմի միջև դիվանագիտական հանձնարարություններ էին կատարում զրիմահայեր Սարգիսն ու մեզ արդեն ծանոթ Բարեկը: Դա արտացոլված է զրիմահայ վաճառականներ Ավետիքին և Գրիգորին վերաբերող հրովարտականներում, որ Մենգլի-Գիրեյը հղել էր Վասիլի III-ին: Ավետիքը առևտրական գործերով գնացել էր Լեհաստան, իսկ այնտեղից էլ Մոսկվա, որտեղ նրան ձերբակալել էին: Մենգլի-Գիրեյը Վասիլի III-ից խնդրում էր Ավետիքին, եթե նա անգամ որևէ հանցանք էր գործել, Սարգիսի և Բարեկի հետ ուղարկել իր մոտ: Գրիգորի առիթով խանը հրովարտական հիշեցնում էր, որ իշխան Միխայլո Լվովիչը նրանից 6 հազար ալթիների կզաքսի մորթի է բռնագրավել և խնդրում էր մորթեղենը վերցնել իշխանից ու հանձնել այն ստանալու համար հատուկ յարլիկով օժտված Սարգսին և Բարա-Կադիրին<sup>31</sup>:

XVI—XVII դարերում Մոսկովյան պետության և Ղրիմի խանության միջև հարաբերությունների բնորոշ կողմը անկայուն վիճակն էր: Թաթարները մերթ թեքվում էին դեպի Լեհաստան, մերթ դեպի Ռուսաստան, նայած, թե ինչ էր թելադրվում Կ. Պոլսից և թաթարական ավագանին ո՞ր կողմից էր ավելի առատ «նվերներ» ստանում՝ Մոսկվայից, մոլդավական վոյեվոդից, թե՛ Լեհաստանից ու Լիտվայից՝ Ռեչ Պոսպոլիտայից: Դ. Ասկոլու հաշվումներով, օրինակ, XVII դարի 20—30-ական թվականներին Մոսկվայի մեծ իշխանի (թագավորի) «նրվերների» (հիմնականում մորթեղեն) արժեքը տարեկան հավասար էր 25 հազ. ռուբլու<sup>32</sup>: Նույն թիվն է ցույց տալիս սովետական հետազոտող Ա. Նովոսել-

<sup>28</sup> «Известия Таврической ученой архивной Комиссии» (ИТУАК), т. 1 (58), Симферополь, 1927, с. 169, տե՛ս նաև «Բանրեի Մատենադարանի», 13, Երևան, 1980, էջ 79—80 (Լ. Ս. Կալիկյանի «Շայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհի վրա» հոդվածը):

<sup>29</sup> «Сборник русского исторического общества», т. 41, с. 72—73.

<sup>30</sup> Г. К а р п о в, Отношение Московского государства к Крыму и Турции в 1508—1517 гг. («Московские университетские ведомости», № 4, 1865, с. 213—214).

<sup>31</sup> «Сборник русского исторического общества», т. 95, 1895, с. 76—77.

<sup>32</sup> ЗООИД, т. XXIV, 1902, с. 115.

սկին 40-ական թվականների համար<sup>33</sup>։ Թեև Մոսկովյան պետությունը շարունակ հոսկացնել էր տալիս, որ «նվերը» տուրք չէ, բայց դա իսկական հարկատվություն էր, որին Լեհաստանի և Ռուսաստանի ազգակից քրիստոնյա թագավորները գիմում էին՝ թաթարներին միմյանց դեմ ուղղելու քաղաքական հաշիվներից ելնելով։

Վիթխարի քանակի «նվերների» միջոցով Մոսկովյան պետությունը «գրնում էր Ղրիմի խանների, թագաժառանգների և իշխանների խաղաղությունը, դաշինքն ու բարեկամությունը և կամ վճարում առանձին ցարևիչների «ժառանգությունը», նրանց ասպատակությունները կիտվական Ուկրաինայի վրա։ Ըստ էության, այդ «նվերները»,— զարգացնում է իր միտքը Վ. Միրոնչևիովսկին,— հարկ էին, որը Մոսկովյան պետությունը վճարում էր Ղրիմին, ինչպես որ դա հասկանում էին Ղրիմում, չնայած այն բանին, որ մոսկովյան դիվանագիտությունը հաստատ կերպով պաշտպանում էր այն տեսակետը, թե «նվերները» ոչ թե հարկ են, այլ մեծ իշխանի կամավոր նվիրատվությունը»<sup>34</sup>։

Ղրիմ—մոսկովյան հարաբերություններին XVII դարի կեսերին մասնակցած զրիմահայերից էր Մուրադը՝ խանի «դեսպանական անձը»։ Սա օգտվում էր դիվանագիտական անձնանմանությունից և Ալեքսեյ Միխայլովիչ թագավորի հասցեին հիշոցներ և անարգանքի խոսքեր շարտելուց հետո էլ նրան չեն պատժում։ Մեկ ու կես տարի Մուրադի շուրջը երկու պետությունների միջև գրագրություններ են կատարվում և նրան վերջապես բաց են թողնում Ղրիմ<sup>35</sup>։

Այս շրջանում դիվանագիտական իրենց ծառայություններով որպես ռուսական ցարի մոտ ուղարկված խանի դեսպան և դիվանագիտական գործակալըրատար աչքի են ընկնում ազովահայ Ալգինը և զրիմահայ Միկոլայկո (Նիկոլայյու) Մանսուրովը։ 1669 թ. Մանսուրովը իր երկու հայ ընկերներ Յագայ Բաղդասարովի և Միմյոն Իվանովի հետ ժամանում է Մոսկվա՝ ձեռքին ունենալով Ազովի փաշայի հուշագիրը և բանավոր հանձնարարականը՝ Բողոքելու Սև և Ազովի ծովերում կազակային հարձակումների դեմ։ Հուշագրում փաշան հայտնում է, որ Դոնի կազակների կողմից իրեն ներկայացրած վերջնագրի պատճենը ինքը իր հայազգի դեսպան Ալգինի միջոցով ուղարկել է ցարին<sup>36</sup>։ Կասկածից վեր է, որ Մանսուրովը որոշակի դիվանագիտական ձրքով օժտրված անձ էր, որին հանձնարարված էր ռուսական իշխանությունների հետ բանակցություններ վարել ժամանակի այնպիսի մի կարևոր հարցի շուրջը, որպիսին Դոնի կազակների հարձակումների դեմ կանխարգելիչ միջոցների մշակումն էր։ Նշենք, որ դրանք պատասխան հարվածներ էին թաթարական ասպատակություններին, որոնց մասին չի լուր նաև Մանսուրովը դեսպանական ատյանում բանակցելիս, հայտնելով, թե Ղրիմի թաթարները ասպատակել են ուկրաինական քաղաքները<sup>37</sup>։ Մանսուրովը մեծ ջանքեր է թափում հասնելու այն բանին, որպեսզի այդ հարցում ստանա ռուսական կողմի երաշխիքը՝ ազդելու կազակների վրա։ Այնուհետև նա ներկայացնում է Ազովի փաշայի հուշագիրը, որից երևում է, թե մինչ այդ Մոսկվա ուղարկված հայազգի Ալգինը պետք է 40 օր մնալով այնտեղ, հասնել հարցի լուծմանը<sup>38</sup>։

Փոխվել էին ժամանակները, և հզորացող Ռուսաստանը պետք է գործուն միջոցներով թաթարական ավերիչ ասպատակությունների դեմն առնել։ Ավարառուական անպատիժ պարելակերպին սովոր թաթարներն ու թուրքերը, XVII դարի 20—30-ական թվականներից, ի զարմանս իրենց, հանդիպեցին ռուսա-

<sup>33</sup> А. А. Новосельский, Борьба Московского государства с татарами в XVII веке, М.—Л., 1948, с. 316.

<sup>34</sup> В. Е. Сыроечковский, Гостн-Сурожане, М.—Л., 1935, с. 59.

<sup>35</sup> Центральный государственный исторический архив древних актов (ЦГАДА), ф. 123, Сношения России с Крымом, 1656—1657 гг., д. 15, лл. 1—37.

<sup>36</sup> Նույն տեղում, 1669—1671, գ. 12, թ. 1—14, 20.

<sup>37</sup> Նույն տեղում, թ. 15.

<sup>38</sup> Նույն տեղում, թ. 22—23.



կան կողմի պատժիչ միջոցներին, և դրան ի տես՝ խնդրում էին ազդել կազակների վրա, թեպետև իրենք շարունակում էին ասպատակությունները, ուսական կողմից «նվերներ» պահանջելն ու գերված ուսուցիչներին վաճառելը: Նման պարագայում, բնականաբար, վարվող բանակցություններում, որպես գործող անձինք, առաջին պլան պիտի մղվեին քրիստոնյա մարդիկ, որոնց օգնությամբ թուրք-թաթարական կողմը հույս ուներ իր առաջարկություններին արժանահավատ բնույթ հաղորդել: Հենց այդպիսի դիվանագետներից էին ուսական շրջաններում ճանաչված հայ վաճառականներ Ալդինն ու Մանսուրովը:

XVII դարում Ղրիմ—ուսական կապերում բանակցությունների կարևոր հարցերից մեկը գերիների փրկագնման հարցն էր, որին ղրիմահայ վաճառականները մասնակցում էին տարբեր շարժառիթներով: Փաստաթղթերը վկայում են, որ ղրիմներին ետգնելու և Մոսկվա տեղափոխելու դեպքերը գրանցվել են միայն այն ժամանակ, երբ առաջ են եկել վեճեր՝ ազատագրված մարդկանց դիմաց վճարումներ կատարելիս: Ուրեմն, ղրիմահայ մարդկանց կողմից ուսական գերիներին թաթարական գերությունից ազատագրելու դեպքերը շատ ու շատ սովոր են եղել, քան աստանում պահպանված փաստաթղթերն են: Մեր ձեռքի տակ եղած գործերը առայժմ վերաբերում են XVII դարին: Սա բնավ չի նշանակում, թե XV—XVI և XVIII դարերում այդ պրակտիկան չի եղել: Պարզապես կամ գործեր չեն կազմվել, կամ էլ վեճեր չեն ծագել, ուրեմն՝ կարիք չի զգացվել դրանք կազմելու: XVIII դարի թուրք հեղինակներից մեկը, օրինակ, վկայում է, որ Կաֆայի քրիստոնյաները «զբաղված էին ստրուկների փրկագնմամբ և նրանց Ռուսաստան ու Լեհաստան ուղարկելով»<sup>39</sup>: 1670 թ. Ղրիմի խանություն և Մոսկովյան պետության միջև գերիների փոխանակման վերաբերյալ կնքված պայմանագիրը պահանջում էր «հույներին և հայերին, որոնք սովոր են գերիներ փրկագնելու և հենց այդ պատճառով էլ նրանց հայտնել գերիների վերաբերյալ կնքված պայմանագրի մասին... որպեսզի նրանք, այդ հմանալով, Ղրիմում և ուլուններում գերիների փրկագնման մասին հայտարարություններ չանեն»<sup>40</sup>: XVI դարում նույնիսկ հատուկ օրենք էր ընդունվել «գերիներին ետգնելու մասին»: Ռուսաստանում մտցվել էր «արողի հարկ», որից առաջացած եկամուտը ծախսվում էր գերիների գնման վրա: Ալեքսեյ Միխայլովիչի օրոք այդ հարկը փոխարինվեց ծխահարկով, որից ստացված տարեկան 150 հազ. ռուբլին դեպպանական ատյանի միջոցով տրամադրվում էր այդ նույն նպատակին: «Փրկագնման գործողությունները» կատարվում էին Մոսկովյան պետության և Ղրիմի խանության սահմանագլխում, որտեղ խանությունը հիմնել էր փոխանակման կետեր<sup>41</sup>:

1671 թ. Ղրիմից վերադառնալիս դեսպանորդ Վասիլի Յուլինը իր հետ բերում է Ադիլ-Գիրեյի հրովարտակը գերիներին փոխանակելու մասին: Ըստ այդ պայմանագրի, այն թաթարները, որոնք Ռուսաստանում ունենին ազգական գերիներ, կարող էին իրենց մոտ գտնվող ուս գերուն փոխանակել Ռուսաստանում գտնվող իրենց ազգական գերու հետ: «Իսկ նրանք, որոնք Ռուսաստանում ազգական գերիներ չունենին, բայց իրենց մոտ ունենին ուս գերիներ, ապա այդ գերին պետք է գնվեր փոխանակման ժամանակ»<sup>42</sup>: Թաթարների մոտ զբոսնում ուս գերիների թիվը անհամեմատ մեծ էր, ուրեմն՝ մեծ թիվով ուս գերիներ պետք է նրանց կողմից վաճառվեին: Հենց այդ էլ առիթ էր տալիս հայ վաճառականներին նրանց փրկագնել: 1670 թ., օրինակ, ղրիմահայ վաճառականներ Աջիրուն ու Յակուբ Յակովլևը\* փրկագնում և Մոսկվա են բերում ուս

<sup>39</sup> Ф. Брун, Крымский полуостров около половины XVIII столетия, Феодосия, 1867, с. 6.

<sup>40</sup> ЦГАДА, ф. 123, 1670 г., д. 14, л. 4—5.

<sup>41</sup> П. Н. Надикский, Очерки истории Крыма, Симферополь, 1951, с. 71.

<sup>42</sup> ЦГАДА, ф. 123, 1670 г., д. 14, л. 5.

\* Ուսուցիչի անուն-ազգանունները պարզ դարձնելու համար Ռուսաստանի դեսպանական ատյանում և այլուր դրանք թարգմանելով՝ հարմարեցնում էին ուսերեն անուններին:

մի շարք գերիներին՝ բոլորն էլ ազնվականներ։ Դեսպանական ատյանում հարցաքննության ժամանակ փրկագնված գերիների տված պատասխանները պարզում են մի շարք կարևոր հանգամանքներ՝ ազատագնման գինը, գերու սոցիալական գրուքունը, վաճառականի կողմից նրան փրկագնելու նպատակները, առուծախի պայմանները և այլն։ Ահա այդ պատասխաններից մի քանիսը։ Անգրեյ Տյուչկովն, օրինակ, հայտարարեց, որ ինքը գերի է ընկել 1669 թ. Կրասնիի և Կոնոտոպի միջև ընկած տարածքում մղված մարտի ժամանակ, Ղրիմում իրեն տվել են զալդա-սուլթանին, իսկ վերջինս 300 ուրբլի պարտքի դիմաց իրեն հանձնել է հայ Աշիբուլին։ Այդ գումարի մասին ինքը հային տրվել է նամակ և նրա ձեռքում նրա հետ եկել է Մոսկվա։ Ա. Տյուչկովը կալվածատեր էր<sup>43</sup>։ Նկատենք, որ Ղրիմում խանից հետո ամենաբարձրաստիճան անձ հանդիսացող զալդա-սուլթանն անգամ եղել է հայ վաճառականի պարտքատերերի թվում և իր այդ պարտքը մարել է գերու միջոցով։

Ազատագրված մեկ այլ գերի՝ Սեմյոն Կոթինի Անգրեյը, ինչպես և Տյուչկովը, գերի էր ընկել իշխան Անգրեյ Ռոմոգանովսկու հետ միասին, սկզբում գտնվել էր Բատիր մուրզայի մոտ, այս վերջինը Վերան վաճառել էր զատրդայի (Թիապարտության—Վ. Մ.), իսկ զատրդայում, տեսնելով իր տանջանքները, հայ Ցակուր Ցակովիլը իրեն փրկագնել էր և փրկագնման համար տվել 120 ուրբլի<sup>44</sup>։ Բացի այդ, 80 ուրբլի էլ Ցակովիլը վճարել էր նրա աշխատանքի դիմաց։ Անգրեյը ևս կալվածատեր էր, ծառայության համար թագավորը, իբրև ուժեղ, նրան տվել էր 500 գյուղացիական ընտանիք և 18 ուրբլի<sup>45</sup>։ Ցակովիլը 50 ուրբլի վճարել էր Ֆիլատ Ֆոմինի, 200 ուրբ.՝ Իվան Ֆիրսովի և 150 ուրբ.՝ Սեմյոն Կիրիլովի համար<sup>46</sup>։ Իսկ Տիմոզկա Կիզոշը գերի էր ընկել ոչ թե թաթարներին, այլ լեհերին, և լեհաստանի թագավորը նրան նվիրել էր Ղրիմի խանին, իսկ վերջինս էլ՝ Մամանդելի մուրզային, որը նրան սաստիկ տանջում էր ռամեն տեսակի տանջանքներով և իր փրկագնման համար պահանջում էր 17 000 ուրբլի, և ինքը այդ տանջանքները տանում էր։ Մուրզայի մահից հետո, «տեսնելով իր տանջանքները, այդ մուրզայի երեխաներից հայ Ցակուրը իրեն փրկագնել է և իր փրկագնման համար վճարել 220 ուրբլի», այդ մասին վերցնելով ստորագրություն<sup>46</sup>։

Գրեթե բոլոր գերիները իրենց ցուցմունքներում որպես փրկագնման զբաղապատճառ ընդգծում էին հայ վաճառականների մարդասիրությունը, որ ներանք դրսևորել էին իրենց գերության տանջանքներից ազատելու գործում։ Կարծում ենք առաջին պլանի վրա այդ մղումը չէր, թեև փրկագնման օբյեկտիվ հետևանքը իրոք մարդասիրական էր։ Եվ ոչ էլ փրկագնման դիմաց օգուտ ստանալն էր պատճառը։ Օգուտ փաստորեն չկար. եթե թերահավատություն չտածենք պահանջված փաստաթղթերի նկատմամբ, ապա պարտավոր ենք փաստագրել, որ, որպես կանոն, փրկագնված գերուն բերելով Ռուսաստան, հայ վաճառականները պահանջում և ստանում էին միայն այն գումարը, որը նրանք գերու ներկայությամբ վճարել էին նրա թաթար տիրոջը։ Ուրեմն, հիմնական պատճառը քաղաքական հաշվենկատությունն էր, ուսական իշխանությունների վստահության նվաճումը և առանձնաշնորհումներին արժանանալը, որոնց կարիքը հայ վաճառականությունը խստիվս զգում էր՝ Ռուսաստանում իր առևտրական գործարքները իրականացնելիս և այնտեղից ապրանքներ արտահանելիս։ Եվ պատահական չէր այն, որ փրկագնված գերիները ըստ մեծի մասին «ընտրովի» մարդիկ էին՝ ազնվականներ, բարձր և միջին աստիճանի զինվորականներ, մարդիկ, որոնց փրկագնումը իշխանությունների աչքում արժեք էր ներկայացնում։

Նրբեմն պայմանավորված գումարի ստանալը տեղիք էր տալիս անհամաձայնությունների։ Հետաքրքիր է, օրինակ, մեզ արդեն ծանոթ Մանսուրովի՝

<sup>43</sup> ЦГАДА, ф. 123, 1670, д. 14, л. 67.

<sup>44</sup> Նույն տեղում, թ. 68:

<sup>45</sup> Նույն տեղում, թ. 69—71:

<sup>46</sup> Նույն տեղում, թ. 68—73:

գործը: Հայ վաճառականներ Ցագյա Բաղդասարովի և Սենյոն Իվանովի հետ միասին Մանսուրովը Մոսկվա դիվանագիտական ուղևորության մեկնելիս միաժամանակ փրկագնել և 1669 թ. Մոսկվա էր բերել չորս ռուս գերիներին՝ բոլորական որդի Բուրովին և ստրելեցներ Գրիշա Ֆրոլովին, Իվաշկո Ռադյանկովին և Վասկա Սեմյոնովին: Սրանց համար նա վճարել էր 235 ռուբլի: Մանսուրովն ու իր ընկերները, կատարելով դիվանագիտական հանձնարարություններ, այս գերիներին էլ փրկագնել և Ազով—Լիվնի—Մոսկվա երկար ճանապարհը կտրելով մայրաքաղաք էին հասցրել, հավանաբար, այն պատճառով, որպեսզի իրենց այդ արարքը ինչ-որ չափով օգնեք գլուխ բերելու Ազովի փաշայի հանձնարարությունը: Մանսուրովի առաջարկը՝ բերված չորս գերիներին փոխելու չորս զրիմցիների հետ, Ալեքսեյ Միխայլովիչի կարգադրությամբ մերժվում է: Դժվար չէ նկատել, որ զրիմցի թաթար գերիները, որոնց Մանսուրովը առաջարկում էր փոխանակել, ավելի աքաղով՝ անձինք են եղել: Մանսուրովին որպես փրկագին առաջարկվում է սամուրամորթի: Հոկտեմբերին նա առանց փրկագինը ստանալու (որովհետև նրան Ազովի փաշան հանձնարարել էր կատարել գերիների փոխանակում) ետ է վերադառնում և ճանապարհին դառնում է թարգմանչի դանակի հարվածի զոհը<sup>47</sup>: Սակայն Մանսուրովի և նրա հայագրի ընկերների գործը այդպես անուշադիր թողնել չէր կարելի, քանի որ նրանք Ազովի փաշայի դեսպանական մարդիկ էին: Թագավորի հրամանով նրա ընկերներին ետ են դարձնում Մոսկվա՝ գործը հետաքննելու համար: Գործին նրան կարևորություն հաղորդելը, մի գործ, որին իրազեկ է դառնում նաև դեսպանական ատյանի տնօրեն, հայտնի դիվանագետ Օրգին-Նաշչոկինը, կապված էր Մանսուրովի գլխավորած դեսպանական առաքելության որոշակի նըշանակության հետ: Ռուսական կողմը դիտեր, որ Մանսուրովի սպանությունն ու գերիներին չփոխանակելը վատ նստվածք կտային առանց այդ էլ դեպի ռուսները վատ տրամադրված փաշայի մոտ, իսկ գա հղի էր հետագա բացասական հետևանքներով: Այդ մտավախությունը աչքի առաջ ունեցող դեսպանական ատյանի գլխավորներից մեկը՝ Ալեքսեյ Լուծինը, որ դեռ Մանսուրովի մեկնելուց անմիջապես հետո գրում էր. «Այժմ Մոսկվայից Ազով է բաց թողնվել մի հայ (իմա՝ Մանսուրովը—Վ. Մ.), իսկ այդ հայը Ազովում փաշային կպատմի ամեն ինչի մասին, որ նրանց դեսպանները արգելված են և գերիների դիմաց փոխանակման վայրում նրանց թաթարներ (թաթար գերիներ—Վ. Մ.) և վարձատրություն չի տրված... Եվ այդ փաշան տեղեկություն կուղարկի Ղրիմ և... խանն ու (նրա) մերձավորները բարի չեն մտածի և կհրամայեն ռուս գերիներին ամուր շղթայել և մեծ նեղությունների ենթարկել: Եվ պետք է, որպեսզի մեծ ինքնակալը կարգադրի փոխանակման կետում ռուս գերիների դիմաց թաթարներ և ծախսագին վճարեն»<sup>48</sup>: Այս մտավախության նկատառումով Մանսուրովի՝ Մոսկվա վերադարձված ընկերների պահանջը բավարարում են<sup>49</sup>:

Ռուսական կառավարությունը մեծ շահագրգռվածություն է ցուցաբերում օտարազգի ցարական գնդապետ Ալֆերի Վիբերտին գերությունից ազատելու գործում: Վերջինս գերի էր ընկել 1661 թվականին, ինչպես գրում էր նրա եղբայրը՝ դեսպանական ատյանի թարգմանիչ Յակովը, «Դնեպրից այն կողմ պալատական սեզանապետ Միխայլո Պիկլոնսկու՝ շերկասյան քաղաքներում թաթարների... դեմ մղված մարտում և այդ մարտում գերի վերցվել»<sup>50</sup>: Նա գրտնըվում էր Շիրիյան Իվաս (Ալվազ) մուրզայի մոտ: 1662 թ. Ալեքսեյ Միխայլովիչը հատուկ հրովարտակ է ուղարկում Ղրիմ իր ներկայացուցիչներ Յակով Յակուշկինի և Գավրիլ Միխայլովի անունով՝ կարգադրելով Վիբերտին փրկագնել, վճարելով 200 ռուբլի և ավելի: Գործը ձգձգվում է մինչև 1669 թ., երբ թագավորը Ղրիմ ուղարկված բոլար Վասիլ Շերեմետևին կարգադրում է «բար

47 Նույն տեղում, 1669—1670 թթ., գ. 12, թթ. 1—33, 37—47.

48 Նույն տեղում, թ. 29:

49 Նույն տեղում, թ. 47—48:

50 Նույն տեղում, 1680, գ. 15, թ. 2:

իր շայնցողութիւն պայմանավորվել Ալֆերիի փրկագնման մասին»<sup>51</sup>։ Սակայն 8-ամյա ջանքերը ապարդշուն են անցնում։ Վիբերիսի կինն ու եղբայրը, հույսը կտրած, գործին մասնակից են դարձնում առևտրական գործերով Մոսկվա եկած ղրիմահայ վաճառական Ֆեոդոր Իվանովին, նրան խոստանալով 700 ռուբլի՝ անկախ այն բանից, թե Ղրիմում որքան էր Վիբերիսի համար նա վճարելու։ Այդ մասին նրան դեսպանական ատյանում տրվում են գրավոր պարտավորութիւն և ատյանի հրովարտակը<sup>52</sup>։ Գալով Ղրիմ, հայ վաճառականը տարիներ տևող սակարկումից հետո վերջապես 1673 թ. փրկագնում է Վիբերիսին 300 ռուբլով։ Երկար ճանապարհ է կտրում հայ վաճառականը Վիբերիսին տեղափոխելիս՝ Ղրիմ—Բելգորոդ (Աքերման)—Յասի—Լադիժին—Կիև—Մոսկվա։ Այդ ընթացքում 100 ռուբլի էլ ծախսվում է ճանապարհին։ Նրա հետ Մոսկվա էր եկել իր քրոջ որդին՝ 19-ամյա հայ պատանի Վասիլի Մերկուրևը<sup>53</sup>։ Մոսկվայում Վիբերիսի եղբայրն ու կինը ձգձգում են հայ վաճառականին վճարել։ Ոչ միայն խոստացած 700 ռուբլին, այլև նրա ծախսած 400-ը։ Ֆեոդոր Իվանովը ստիպված դիմում է թագավորին, բողոքելով, որ պարտապանները ոչինչ են վճարում և «հինգերորդ ամիսն է ապրում եմ Մոսկվայում և իզուր ծախսակր եմ անում»<sup>54</sup>։ Որոշ ժամանակ անց հայ վաճառականը Մոսկվայում մահանում է, և նրա փոխարեն 300 ռուբլի տրվում է Վասիլի Մերկուրևին, և, եւ, վերջապես մեկնում է Կաֆա<sup>55</sup>։

Փրկագնված մարդկանց շուրջը ծագած վեճերը կարգավորելու համար Ալեքսեյ Միխայլովիչը և բոյարները 1670 թ. ստիպված հատուկ կարգ են սահմանում, ըստ որի գանձարանի հաշվին փրկագինը փոխհատուցելուց առաջ պետք է ավետարանի վրա խոստովանեին դրամի իսկական շափի համար։ Եթե փրկագնված մարդու համար փրկագնողի տված գումարը պետական սահմանվածից ցածր էր, ապա այն իսկույն վճարվում էր, իսկ եթե վաճառականի նըշած գումարը ավելի բարձր էր փրկագնված մարդու ասածից, ապա վճարվում էր ըստ պետական սակագնի։ Երբ գերի ընկած մարդկանց համար փրկագնողը նրա բարեկամների հետ պայմանավորվել էր ստանալ պետական սահմանված սակագնից ավելի մեծ գումար, ապա տարբերությունը պետք է մարեին ազատագրված անձի բարեկամները<sup>56</sup>։ Կառավարությունը օգնության էր հասնում այն գերիներին, որոնց բարեկամները նշված տարբերությունը անկարող էին վճարել։ Նման դեպքում նրան տրվում էր հարկահավաքման թերթ՝ գյուղերից հարկ վերցնելու համար։ Այդպես պատահեց, օրինակ, պարսկահայ վաճառական Մերկուրևի Վարտենեստովի (Սենկազովի) կողմից փրկագնված Տիմոֆեյ Լաշկովի հետ (սա գերի էր ընկել 1661 թ.), որին նա 1675 թ. 400 ռուբլով փրկագնել էր Ղրիմում, տարել Նախիջևան, հետը պայմանագիր կնքել և 3 տարի հետո՝ 1678 թ., իր հետ բերել Մոսկվա։ Նրա համար պետական գանձարանից Վարտենեստովը ստանում է 140 ռուբլի։ Քանի որ 260 տարբերությունը Լաշկովն անկարող էր վճարել՝ 1680 թ. կառավարությունը նրան շնորհում է հարկահավաքման թերթ, որը ստանալուն պես Լաշկովը հեռանում է Մոսկվայից։ 1681 թ. իշխանություններին ուղղած իր դիմումներից մեկում Վարտենեստովը բողոքում էր, որ թեև Լաշկովը «կալվածքներ և վոտչինա» ունի, բայց դրամը չի տալիս և ահա շորս տարի է ինքը «ներա ետևից քարշ է գալիս»<sup>57</sup>։ Իհարկե, հայ վաճառականը միայն 260 ռ. համար էլ, որ մնացել էր Մոսկվայում։ Հավանաբար, նա այդ տարիներին զբաղված էր առևտրով, մանավանդ, որ դա մի ժամանակաշրջան էր, երբ Գրիգոր Լուսիկովի ջանքերից հետո խստիվ աշխուժացել էին

51 Նույն տեղում, թ. 3:

52 Նույն տեղում, թ. 10, 26:

53 Նույն տեղում, 1673, գ. 24, թ. 4:

54 Նույն տեղում, գ. 15, թ. 10:

55 Նույն տեղում, գ. 24, թ. 21:

56 Նույն տեղում, 1680 թ., գ. 16, թ. 33, 48:

57 Նույն տեղում, թ. 31, 34, 36, 37, 40, 46, 49:

պարսկահայ առևտրա-արհեստավորական դասի այցելութունները ուսական մայրաքաղաքի 1660—1670 թթ. Գրիգոր Լուսիկենցի կնքած համաձայնագրերը նոր փուլ էին նշանավորում նաև հայ վաճառականության գործունեության առաջ Ռուսաստանում, և իրադրությանը իրազեկ հայ առևտրական դասի ներկայացուցիչները, ուս մարդկանց ազատագրելով, բացի վերը նշված շարժառիթներից, նաև շնորհ էին նվաճել ուսական կառավարության համակրանքը իրենց ժողովրդի և հայրենիքի հանդեպ:

\* \* \*

Ռուսաստանում լայն գործունեություն ծավալած հայ վաճառականներն էին, որ դարձան Իսրայել Օրու գործունեության նախակարգայինները: Ղրիմահայերը, մանավանդ առևտրական դասի զորեղ ներկայացուցիչները, որոնք, իրենց գործունեության թելադրանքով Ռուսաստանի և Մերձավոր արևելքի երկրների մշտական այցելուներն էին ու լավ ծանոթ էին քաղաքական իրադրությանը, աշխատում էին որքան հնարավոր է օգտակար դառնալ Օրու և նրա համախոհների նախագծումների իրագործմանը, նպաստել Ռուսաստանի առաջխաղացմանը Անդրկովկասում, ուրեմն և՛ հայ ժողովրդի ազատագրմանը: Վերահիշյալ ձգտումով էր թելադրված, օրինակ, Ղրիմահայ վաճառականներից մեկի կարևոր հաղորդումը ուսական իշխանություններին, որը նա արել էր 1723 թ. ապրիլին՝ այսինքն Պարսկական արշավանքի այն շրջանում, երբ գեներալ-մայոր Մ. Ա. Մատյուշկինի հրամանատարության տակ անցած ուսական զորքերը նախապատրաստում էին Բաքվի գրոհը: Այդ տեղեկությունը Մինաս վարդապետը հղում է Մ. Ա. Մատյուշկինին, իսկ վերջինս էլ՝ ուսական ժովակալության կոլեգիայի պրեզիդենտ, գեներալ-ծովակալ Ֆ. Մ. Ապրակսինին: Հաղորդագրության հեղինակ Ղրիմահայ վաճառականը եղել էր էրզրումում, իսկ այնուհետև Դոնի վրայով անցել Աստրախան: Թուրքական բանակի վիճակի մասին բավական լավ իրազեկություն ունեցած այս լրատուն հայտնում էր, թե թուրքական խարցու փաշան Պարսկաստանին սահմանամերձ քաղաքից բոլոր բեկերի հետ միասին անցել է Պարսկաստան, ավերել սահմանամերձ գյուղերը և շատ ավար վերցրել, իսկ Կոստանդնուպոլսից Տրապիզոն են ժամանել 13 ռազմանավեր՝ ամեն տեսակի զինամթերքներով և հրետանիով հանդերձված: Տրապիզոնից յոթ փաշաներ ուղարկվել են Պարսկաստան, իսկ հրետանին և մյուս զինամթերքները նավերից բեռնաթափել և ցամաքով տեղափոխել են էրզրում. իսկ հիշյալ յոթ փաշաները այդտեղից ռազմարշավի շեն շարժվել, քանի որ սուլթանից նման հրաման չի եղել, իսկ այն 13 ռազմանավերը, որոնք ուղարկվել էին հիշյալ զինամթերքներով, տակավին գտնվում են Տրապիզոնում, և այժմ թուրքերը սկսել են ամրապնդել էրզրում քաղաքը, իսկ այն լեզգիներին, որոնց ուղարկել են թուրքերից օգնություն խնդրելու իրենց համար, թուրքերը նրանց ոչ մի ընդդիմություն չեն տվել<sup>58</sup>:

Ռուս-պարսկական և թուրք-պարսկական ռազմական առճակատման ժամանակաշրջանում, առճակատում, որը անմիջականորեն կապված էր նաև Կովկասի ու Անդրկովկասի հետ, բնականաբար, վերոբերյալ տեղեկությունը որոշակի կարևորություն ուներ, և հենց այդ պատճառով էլ այն հասցվել էր Պե-տերբուրգ: Պակաս նշանակություն չունեի նաև հայ վաճառական Սապերի հաղորդումը, որը գեներալ-մայոր Կրոպոտովի միջոցով 1724 թ. հուլիսի 24-ին հայտնվում է նույն Մ. Ա. Մատյուշկինին: Նշենք, որ այդ ժամանակ Բաքուն, Սվյատոյ Կրեստը, Դերբենդը և այլ կետեր արդեն գտնվում էին ուսական զորքերի ձեռքում: Ըստ Սապերի հաղորդման՝ Ղրիմից Ազով էին գնացել 60 000 զորքեր, այնտեղ էր շարժվում Ղրիմի խան Սալթան-Գիրեյի որդին՝ զորքով, նրա հետ էին նաև թուրքական զորքերը. ռաջց թե ուր են մտադիր նրանք

<sup>58</sup> Центральный государственный архив Военно-морского флота (далее ЦГАВМФ), ф. 233, оп. 1, д. 222-а, л. 124.

գնալ», ինքը՝ Սապերը, դա չգիտե, «միայն ընդունում են, որ գնալու են Սվյատոյ կրեստ ամրոցի վրա, իսկ բոլոր լեռնական ժողովուրդները խոսք են տվել միասին գործել»<sup>59</sup>:

Այս կապերի լույսի տակ որոշակի հետաքրքրություն է ձեռք բերում այն տեղեկությունը, որին հանդիպում ենք Գաբրիել Պատկանյանի 1879 թ. գրած «Հարյուրամյակ Նոր Նախիջևան հայաբնակ քաղաքի» ձեռագիր աշխատության մեջ<sup>60</sup> և որը վկայում է XVIII դարի 20-ական թվականներին Սյունիքում մրդված ազատագրական շարժմանը ու այդ աղերսով հայ-ուսական կապերին զրիմահայոց ունեցած մասնակցության մասին: Ռուսական, ուկրաինական, կովկասյան, թուրքական և մերձավորարևելյան այլ շրջաններում տիրող քաղաքական եռուզեռին իրազեկ զրիմահայերը, որոնք գիտեին Ռուսաստանի օգնության հույսով ոտքի ելած Ղափանի և Արցախի հայության պայքարի մասին և հենց այդ իրազեկությամբ էլ իրենց իմացածը հաղորդում էին ուսական իշխանություններին, Գ. Պատկանյանի հաղորդմամբ, ուղղակի շոկատներ կազմելով, հասնում են օգնության իրենց հայրենակիցներին: Թեոդոսիայի ավագ քահանա Բարդուղիմեոսը և Եվպատորիայի ավագ քահանա Մարկոսը, պատմում է Գ. Պատկանյանը, 1720 թ. Երուսաղեմում Հայաստանից ուխտի եկածներից իմանալով հայերի կրած նեղությունների մասին, Քրիստոսի գերեզմանի վրա երդվում են Ղրիմ վերադառնալուն պես իրենց ծխերը հանձնել իրենց կրտսեր քահանա որդիներին և «ինքյանք երթան օգնության յուրյանց կրտսեկից՝ և ազգակից դժբախտ եղբարց»:<sup>61</sup> Թեոդոսիա վերադառնալուց հետո նրանք Հայաստանից եկած վաճառականներից լուր են ստանում, որ Սյունիքի և Արցախի հայերի խնդրանքով վրաց թագավորը նրանց օգնության է ուղարկել Դավիթ-Բեկին, որ այլուրյանց զորագուլիս դառնա և առաջնորդե, որ յուրյանց երկրեն թշնամիքն հալածեն»<sup>62</sup>: Այս լուրն առնելուն պես Բարդուղիմեոսը Թեոդոսիա է կանչում տեղ Մարկոսին: Տավրիկյան նահանգի հայերի անկեղծ սերն ու հարգանքը վայելող այս երկու անձինք գաղտնի ժողով են հրավիրում և ժողովականներին հայտնում իրենց ուխտի մասին: Իրենց ազատելով «սեպհական անկեղեցաց և ժողովրդյան ծխական հոգսեն», և ստանալով զրիմահայ թեմի առաջնորդ Վարդան Աստապատցու գաղտնի համաձայնությունը, նրանք ժողովին մասնակցած առանձին մարդկանց հետ շրջում են Ղրիմի հայաբնակ վայրերը և «հայասեռ երիտասարդաց սրտերու մեջ սկսան վառել բորբոքել ազգի և հայրենեաց սերն»<sup>62</sup>: Այս երկու քահանաների և նրանց կուսակիցների պրոպագանդի շնորհիվ մի քանի հարյուր երիտասարդ խոստանում են հավաքվել նրանց մարտական դրոշի տակ: Այդ քայլի ձեռնարկման համար Ղրիմում հանդամանքները նպաստավոր էին. Ղրիմի խանի բազում ժառանգների միջև այնպիսի գծություններ և կռիվներ կային, որ «մինչև այն օրն մրզաններն չէին համարձակած նոցա նման աղմկահարությունք մտաբերել անգամ»:

Համեմատաբար բարենպաստ մթնոլորտն օգտագործելով՝ զրիմահայերը որոշում են շարժվել նախ Տրապիզոն՝ երկու նավով. Թեոդոսիայից՝ Բարդուղիմեոսի և Եվպատորիայից՝ Մարկոսի գլխավորությամբ: Տրապիզոն են ժամանում 285 հոգի: Լազերի և քրդերի միջից ապահով անցնելու համար նրանք հաղնում են լազերի զգեստ և բաժանվում առանձին-առանձին խմբերի՝ յուրաքանչյուրում տասնհինգական մարդ՝ իր օնբաշիով (տասնապետով): Գ. Պատկանյանը նշում է 24 տասնապետներից մի քանիսի անունը, ինչպես նաև թրվարկում նրանց հետագա շառավիղներին, որոնք ապրում էին Ղրիմում, ապա նաև Նոր Նախիջևանում: Նպատակահարմար է բերել այդ հատվածի մի մասը, քանի որ դա հեղինակի պատումի այն մասերից է, որոնք հնարավորություն են

59 Նույն տեղում, գ. 228, թ. 100:

60 Մատենադարան, ձեռ. 8815, թ. 25—39, Տե՛ս նաև Վ. Ա. Պատկանյան, Նոր Նյութեր Դավիթ-Բեկի ազատամարտության մասին («Գրական թերթ», 14. II. 1964):

61 Մատենադարան, ձեռ. 8815, թ. 25ր:

62 Նույն տեղում, թ. 27ա:

տալիս վստահել նրա հաղորդածի վավերականությանը: Այդ տասնապետերից էին Ռեֆեքցի Քարաքաշ Գեվորգ աղայի որդին, գվարթաժաղիկ Հոհաննես երիտասարդն, հորմե հառաջացել են Նոր Նախիջևանա և Խրիմու Քարաքաշյանք աղնվականք:

Նրկորդն եղել է հաթրան շեքն (՝ սուրղաթցի Ալեքսանի որդի քաջարի Հակոբն (որո թոռն էր հաթրանօղլու մահտեսի Հարությունն, հայրն մեծահամբավ Պողոս աղայի հաթրանյան և սորա որդին աղա Գևորգ հաթրանյանն ունի այժմ երկու որդի Հովհաննես և Պողոս հաթրանյանք):

Նրորդն եղել է տեր Մարկոսի ազգական Շահինյան մահտեսի Պողոս աղայի քաջագոտի որդի Անդրեանն (որո թոռն էր Շահինյան տեր Հովհաննեսն, որ վախճանել է Նոր Նախիջևան, որո որդին է Շահինյանց տեր Հովհաննիսյան):

Չորորդն եղել է հայալը Ստեփան աղայի որդի Սաղաթելն (որո թոռն էր մոմճի Գավիթն և յուր եղբարքն, որոց ծագել են ամենայն հայալյանք):

Հինգերորդն էր Խրիմու Ազամաթ Քիրեի խըլըճճի (սուսերագործ) տեր Մարկոսի ազգական և խոստովանորդի մահտեսի Մատթեոս աղայն անպարտելի երիտասարդն (որո թոռն էր խըլըճճի Հակոբն, որ ուներ որդիս Մատթեոս և Վարգեվան, ևն):

Վեցերորդն էր այն Կետիկ փաշայի քառասուն գլխատյալ անեցի իշխանաց մեջն՝ հջենց նահատակի շառավիղ հջօղլի Մուրադ աղայի որդի Գրիգորն (որո մի թոռն էր Ատոմ, որ գնաց ի Ղզլար և մյուս թոռն էր հջօղլի Թումաս աղայն, հայրն Մարտիրոս և Գաբրիել աղայից: Այն Գրիգորն էր նախահայր համայն հջոյանց տոհմին՝ որ ի Զմյուռ են, ի Ղզլար և ի Նոր Նախիջևան):

Յոթերորդն էր Արճուր Գրիգոր անհաղթելի պատանին (որո թոռն էին Արճուրօղլի հաչերեսն և ազգակիցք նորա Գեորգ և Թուման):

Ութերորդն էր Տեվեճի Մանուկի որդի Վարդպարոնն (որո թոռն էր Լուսավորչի եկեղեցվո երեսփոխան Տեվեճյան մահտեսի Սահակն և մյուս Տեվեճյանք):

Իններորդն էր հարասուպաշի մեծ ջրաղացի կալվածատեր Սալթուկ Մարգարի որդի Սերոբն (որո թոռն էր Սալթիկյանց նահահայր Գասպարն՝ Թոփալ մականվանյալ):

Տասներորդն էր Նազիրյան Հովհաննես աղայի որդի Վարդան, որ Վարդան Մամիկոնյան կկոչեին... (որո թոռանք էին Նազիրյան Մկրտիչ և Ստեփան աղայք):

Մասններորդն և երկուտասներորդն էին Չորչոփյան երեւելի գերդաստանի մեջն ծաղկյալ մահտեսի Քերոբն և տեր Կարապետի որդի Ալեքսանն, որ Նրուսառեմեն նոր վերադարձած լինելով, ուր ուխտավորներեն լսել էին Հայաստանի նեղությունն և Դավիթ Բեգի ազգասիրական հանդեսներն... Այս Ալեքսան տեր Կարապետյանի թոռն էր Հովակիմ աղայն, որ ցասկոտ և անվեհեր սիրտ ունենալով՝ թաթարներն մականուն էին տվիլ տելի, իսկ հայերն ին Հովակիմ կկոչեին, որո որդիքն էին Մինաս աղա Պուտուկ մականվանյալ, Մըկըր աղա հաչատուր և Արիստակես, տեր Կարապետի անվամբ Փոփովեանք<sup>63</sup>:

Տրապիզոնից նրանք անցնում են Մուշ, ապա Կարս ու Անի և 1722 թ. վերջապես հասնում Դավիթ-Բեկի բանակ, ճիշտ այն ժամանակ, երբ Քաջագոտի տեր Ավետիքն և Ագուլիսո անհաղթելի տեր Մկրտիչն (որդի Տերենց կամ տեր Մկրտչյանց նահապետն) եկել էին, և Դավիթ Բեգն յուր զորաց վերա գորավարությունն հանձնել էր անպարտելի քաջ Մխիթար զորագլխինս և ինքն յուր գորքն կվառեր և կկազմեր՝ սպասելով Կինուվագո Թորոս իշխանի և Մեղրու Ստեփանոս իշխանի գալստյան, որ միասին ճակատամարտ խմբեն ընդդեմ պարսից զորության<sup>64</sup>: Դավիթ-Բեկը Բարդուղիմեոսին և Մարկոսին շնորհում է «զորապետության իշխանություն և դրոշակ»: Նրանց հրամանատարության ներքո, ըստ Գ. Պատկանյանի, զրիմահայերը ազատագրական մարտիկների շարքերում ակտիվորեն մասնակցում են կռիվներին: Մխիթարի սպանություն

63 Նույն տեղում, թ. 28բ—29ա:

64 Նույն տեղում, թ. 30ա:

նից հետո, 1729 թ., նրանք վերադառնում են հայրենիք՝ ծանր վերքեր կրած և շատերն էլ խեղանդամ դարձած:

Դեպքերի ու դեմքերի դրեթե ճշգրիտ նկարագրությունը, Դավիթ-Բեկի շարժմանը մասնակցած ղրիմահայերի հետագա սերունդների թվարկումը և, վերջապես, ձեռագրի հեղինակ, նշանավոր հայագետ Գ. Պատկանյանի և նրա տոհմի պատկանելիությունը ղրիմահայ անվանի ընտանիքների թվին ինչ-որ շփոթված վիպական գունազարդում ունեցող այս պատմության վրա իսկություն որոշակի դրոշմ են գնում:

Այս դեպքերից հիսուն տարի անց ղրիմահայ մասսաները իրենց ուսական կողմնորոշումը ցուցադրում են զենքը ձեռքներին: Ռուս-թուրքական առաջին պատերազմի ժամանակ (1768—1774) և դրան հաջորդած տասնամյակում նրանք թե մարտի դաշտում և թե դիվանագիտական ու այլ բնագավառներում իրենց բոլոր ուժերով նպաստում են թերակղզին Ռուսաստանին միացնելու նպատակով Եկատերինա II-ի և Գ. Ա. Պոտյոմկինի ձեռնարկած ռազմաքաղաքական և տնտեսական միջոցառումներին: Ռաբի Ազարիան, դեպքերին ակա-նատես կարաիմ գործիչը, հայտնում է, որ հայերն ու հույները ռուսների հետ կռվում էին թուրք-թաթարական ուժերի դեմ<sup>65</sup>: Նշանակալից թվով ղրիմահայեր մտել էին գործող ուսական բանակի շարքերը: Օր (Պերեկոպ) անառիկ ամրոցի դռները ուսական բանակի առաջ բացողները հայերն էին<sup>66</sup>: Շոշափելի էր նրանց օգնությունը մասնավոր ռազմական հետախուզության ասպարեզում. նրանք ուսական հրամանատարությանը հայտնում էին թշնամու ռազմական գաղտնիքները, ուղեցույցի դեր կատարում: Այդ շրջանում ուսական բանակին մատուցած իրենց օգտակար ծառայությանը աչքի ընկան նշանավոր ղրիմահայեր Մարկոս Կյումաշլին, Կարապետ Մերզինը և ուրիշներ: Հ. Արզու-թյանի միջնորդությամբ նրանցից շատերը պարգևատրվեցին ուսական կառավարության կողմից<sup>67</sup>: Ապագա ծովակալ Լ. Մ. Սերբերյակովի հայր, ուսական բանակում հարյուրապետ դարձած Մարկոսն էր այն անձնավորությունը, որի վրա էին դրված 1771—1777 թթ. թաթար-թուրքական կապերը հետախուզելու և այդ մասին ուսական հրամանատարությանը զեկուցելու պարտականությունները: 1771 թ. ուսական 2-րդ բանակի կողմից Կաֆան գրավելու օրից Կյումաշլին շատ կաֆահայերի հետ անցնում է ուսական զորքերի կողմը և մատուցած ծառայության համար, ինչպես ասված է պաշտոնական մի փաստաթղթում, «մի անգամ չէ, որ կանգնում է կյանքից զրկվելու վտանգի առաջ»<sup>68</sup>: 1776 թ. նա կարողացավ իրազեկել ուսական հրամանատարությանը թուրք-թաթարական կողմից ուսական զորքերի դեմ նախապատրաստվող ելույթի մասին: Այդ տեղեկությունները Մարկոսը ստանում էր ղրիմահայ իր ազգակիցներից<sup>69</sup>: Նույն թվականի սեպտեմբերին եվպատորիացի Կարապետ Մերզինը, գիտակցելով Ղրիմում Ռուսաստանին ձեռնտու խան կարգելու կարևորությունը, ուսական հրամանատարությանը զեկուցում էր, թե՛ 1) Կուրանից նախ-կին ղալղա Շահին-Գիրեյի ժամանման լուրը անհանգստացրել և տագնապի մեջ է գցել Դեվլեթ-Գիրեյ խանին և թաթարական ավագանուն, 2) թուրքական սուլթանը, չնայած Ղրիմը անկախ հռչակելուն, շարունակում է ան դիտել որպես իր վասալ, իրեն է վերապահում խան նշանակելու իրավունքը, Դեվլեթ-Գիրեյին ուղարկել է հրովարտակ, կապա, սուր և գրիչ, 3) Դեվլեթ-Գիրեյի և թուրքիայի միջև սերտ կապեր կան<sup>70</sup>:

<sup>65</sup> «События, случившиеся в Крыму в царствование Шагин-Тирей хана», перевод с еврейской современной рукописи, сочиненной караимом Раббья Азария, сыном Илья, с. 126.

<sup>66</sup> Մատենադարան, արխիվ, անհատ. անձ. ֆ., թղթ. 137, վավ. 68, թ. 3:

<sup>67</sup> Նույն տեղում:

<sup>68</sup> Крымский областной гос. архив, ф. 49, оп. 1, д. 355а, л. 6 об.

<sup>69</sup> «Присоединение Крыма к России». Рескрипты, письма, реляции и донесения, т. I—IV (1887—1896), СПб., т. I, с. 52—53.

<sup>70</sup> Նույն տեղում, էջ 80—81:



1777 թ. Ղրիմում ուսական զորքերի գլխավոր հրամանատար Ա. Ա. Պրոզորովսկու ցուցումով վերոհիշյալ Մարկոսը առևտրականի անվան տակ գալիս է Բախչիսարայ: Նրան հաջողվում է հանդիպումներ ունենալ Շահին-Գիրեյի և ուսական հրամանատարության կողմնակից թաթար իշխանավորների, մանավանդ Շիրինյան բեյի հետ: 1777 թ. հունվարի 20-ին նա ուսական գլխավոր զինակալանին զեկուցում է, թե Շիրինյան բեյը խնդրում է Շահին-Գիրեյին անհապաղ գալ Ղրիմ, քորովհետև ինչքան այսուհետև ուշանա նրա ժամանումը Ղրիմ, այնքան ուժեղ կդասավորվեն ընդդիմադիր զործերը<sup>71</sup>: Ապրիլի 8-ին նույն Մարկոսը տեղեկացնում էր Կաֆայից, թե թուրքական նավահանգիստներում տեղի է ունենում զորքերի կենտրոնացում՝ նրանց Ղրիմ ուղարկելու համար<sup>72</sup>:

1777 թ. գարնանը ուսական կառավարության առաջադրանքով Մարկոսը ժամանում է Կ. Պոլիս: Այդ ժամանակ Կոստանդնուպոլսում էր գտնվում Ղրիմի խանի պատվիրակությունը, որի խնդիրն էր ցույց տալ, թե Շահին-Գիրեյը խան է դարձել թաթար բնակչության ցանկությանը և գործում է միանգամայն ինքնուրույն: Մարկոսը, կապ պահպանելով այդ պատվիրակների հետ, Կոստանդնուպոլսի ուսական դեսպան Ալեքսանդր Ստախիևին պետք է տեղյակ պահեր թուրքական արքունիքում կատարվող իրադարձություններին, իսկ թաթար պատվիրակներին էլ հայտներ դեսպանատան միջոցով ստացված հրահանգները: Բայց թաթարական պատվիրակությանը նրա կատարած ամենօրյա այցելությունները հայտնի են դառնում թուրքական իշխանություններին, որոնք արգելում են դրանք: Մարկոսը, սակայն, դեռևս Ղրիմում կանխազգացել էր նման անհաջողության հնարավորությունը և Բախչիսարայից իր հետ էր վերցրել մի հայի, որին հազցրել էր թաթարական զգեստ և ծպտյալ մտցրել պատվիրակության կազմում: Իբրև Ղրիմի խանի պատվիրակության անգամներից մեկը՝ սա ամեն ինչ իմանում և հայտնում էր Մարկոսին, իսկ վերջինս էլ Ստախիևի միջոցով Ա. Ա. Պրոզորովսկուն<sup>73</sup>: Կոստանդնուպոլսից Պրոզորովսկուն գրած իր նամակում Մարկոսը հայտնում էր. «Իմ բարերար, թող հայտնի լինի ձեզ, որ մենք Ցարգրադ հասանք մայիսի 15-ին, դեպուտատներին (իմա՝ Ղրիմի պատվիրակներին, որոնց թվում նաև ծպտյալ պատվիրակ Բախչիսարայցի հային—Վ. Մ.) բնակարան հատկացրին էսկյուզարում (Սկյուզարում—Վ. Մ.), իսկ ինձ մեր ռեզիդենտ Ալեքսանդր Ստախիևը վերցրեց իր մոտ: Նրա մոտից ամեն օր մի անգամ գնում եմ դեպուտատների մոտ՝ նրանց այստեղի տեղեկությունները պատմելու համար, իսկ նրանցից բերում եմ [տեղեկություններ] նրան, դեսպանին: Այստեղ ես գտա մեր թշնամի Դեվլեթ-Գիրեյ խանի հետ փախած բոլոր մուրզաներին: Հենց որ նրանք իմացան իմ գալու մասին և որ ես տեղեկություններ եմ տանում ռեզիդենտից դեպուտատներին, իսկ նրանցից նրան, վեզիրին հայտնեցին, որ ռուսների կողմից մեկը, այստեղ լինելով դեպուտատների հետ, ամեն օր տեղեկություններով դնում է նրանց մոտ, իսկ նրանցից ռեզիդենտի մոտ, որ նա Կաֆայի բնակիչ է և միշտ օգտագործվում է այդօրինակ լրատաղություններում, որ ես բոլոր մուրզաներին դարձրել է Ռուսաստանի կողմը (ընդգծումը—Վ. Մ.) և որ այստեղ էլ ուրիշ այլ նպատակով չի եկել: Այդ մասին մի մարդ տեղեկացրել է իմ բարեկամ Բեքիր-աղային, իսկ նա ասաց ինձ՝ Մարկոս, եղիր զգույշ, ամեն օր մի գա այստեղ: Այսպիսով նրանց մոտ այժմ գնում եմ երեք օրը մեկ անգամ և այն էլ թուրք պահակի ուղեկցությամբ, նույնպես և նրանց մոտից էլ մեր ռեզիդենտի մոտ [գալիս եմ] տեղեկություններով... Այստեղի տեղեկությունների մասին, եթե բարեհաճեք հարցնել, այն, ինչ ես տեսել ու լսել եմ, ինձ համար անվայել է գրել, այդ ամենը ես տվել եմ [հայտնել եմ] Ալեքսանդր Ստախիևին, իսկ նա էլ բարեհաճել է գրել ձեզ: Այսուհետև ես այն ամենը, ինչ որ լսեմ ու տեսնեմ, նրան կը-

71 Նույն տեղում, էջ 259:

72 Նույն տեղում, էջ 544—545:

73 Նույն տեղում, էջ 747—748:

հայտնեմ, ինչ որ կրարեհաճեք իմանալ: Աստժո ողորմածությամբ հանգամանքները այստեղ լավ են, ինձ այդպես է թվում, այն բոլոր մուրզաները, որ եկել են այստեղ, առաջ և հետո, լինելով անազնիվ և ստախոս, գնացել են Ռումելիա և ոչ ոք չի մնացել, բացի Ղազի ասկյար էֆենդուց»<sup>74</sup>:

1777—1778 թվականներին Կ. Պոլսում ռուսական դեսպան Ա. Ստախիեի՝ Ա. Ա. Պրոզորովսկուն, կոմս Ն. Ի. Պանինին և Ռումյանցեին (Ռումյանցև-Չաղունայսկուն) հղած զեկուցագրերից ակներև է դառնում, որ գրանցում բովանդակված տեղեկությունների հեղինակը Մարկոս Կյումուշլին է<sup>75</sup>: Վերջինիս եռուն գործունեությունը ի տես՝ թուրքերը սպառնում են վերջ տալ նրա կյանքին, և Մարկոսը հազիվ կարողանում է գլուխն աղատել<sup>76</sup>:

«Բոլոր մուրզաներին Ռուսաստանի կողմը դարձնող» Մարկոսի դիվանագիտական հաջողության և այդ ասպարեզում նրա ծանրակշիռ ներդրման վկան էր այն հանգամանքը, որ 1778 թ. փետրվարին նրան գործուղում են Ռումյանցև-Չաղունայսկու մոտ՝ հանգամանորեն զեկուցելու Ղրիմի հարցում սուլթանական արքունիքում իշխող մթնոլորտի մասին: Դեսպան Ա. Ստախիեը նրան ուղարկելով Ռումյանցևի մոտ, հարկ էր համարել հանձնարարական գրություններ տեղյակ պահել, որ «հայտնի ենիկալեցի»՝ հայ հարյուրապետ Մարկոսը՝ իր ռեզրազանց նվիրվածությամբ և շանասիրությամբ արժանի է բարձր հովանավորության և ձեր ողորմածագին խնամածությանը»<sup>77</sup>: Ապրիլի 15-ին Մարկոսը Ռումյանցևի հանձնարարությամբ մեկնում է Ղրիմ գեներալ Ա. Պրոզորովսկու մոտ՝ «մանրամասն և ճշգրիտ բացատրություններ» անելու համար:

Մարկոս Կյումուշլու (Սերբերյակովի, Սերբերովի) ծառայությունները բարձր գնահատականի են արժանացել ժամանակի ռուսական զինվորական և քաղաքացիական բարձրաստիճան գործիչների կողմից: Մարկոսի ռազմաքաղաքական գործունեությունն ըստ արժանվունքն բնութագրող ատեստատներ են տվել Կերչ-Ննիկալե ամրությունների զորքերի հրամանատար, գնդապետ Ստուպիշինը, Դնեպրի աջ ափում և Ղրիմում տեղակալված զորքերի հրամանատար, գեներալ-պորուչիկ Ա. Ա. Պրոզորովսկին, Կերչ-Ննիկալե ամրոցների օբեր պարետ, գեներալ-մայոր Բորզովը, Ազովի հետևակային գնդի հրամանատար, փոխգնդապետ Ա. Վենցելը, Շահին-Գիրեյ խանի մոտ ռուսական ռեզիդենտ Ա. Կոնստանտինովը, Ղրիմի և Կուրանի ռուսական զորքերի հրամանատար, գեներալ-պորուչիկ Ա. Վ. Սովորովը, Ղրիմի խանի մոտ ռուսական արտակարգ դեսպանորդ և լիազոր-մինիստր Պ. Վեսելցկին, Տավրիկյան թերակղզու վրա ռուսական զորքերի հրամանատար, հետագայում նահանգապետ Մ. Կախովսկին և ուրիշներ<sup>78</sup>: Իր տված ատեստատում մեծն Ա. Վ. Սովորովը, օրինակ, գրում էր, թե Մարկոսը օգտագործվել է Ղրիմից «Ազովի նահանգ քրիստոնյաներին վերաբնակեցնելու ժամանակ, ինչպես նաև դրանից առաջ տարբեր կարևոր հանձնարարականներ կատարելիս, որոնք կատարել է գերազանց շանասիրությամբ և հավատարմությամբ»<sup>79</sup>:

Մարկոսի, Կարապետի, Իվանսի և մյուսների գործունեությունը, ինչպես նաև ռուսական բանակի շարքերում թուրք-թաթարական զորքերի դեմ մղված

<sup>74</sup> Նույն տեղում:

<sup>75</sup> Նույն տեղում, հ. II, էջ 23, 103, 110—112, 259:

<sup>76</sup> Նույն տեղում, էջ 103:

\* Մ. Կյումուշլին բնիկ կաֆտցի էր: Այստեղ «ենիկալեցի» է նշված այն պատճառով, որ հատուկ ակտով թույլ էր տրված ռուսական հպատակություն ընդունած զրիմահայ ընտանիքներին (որպեսին էր նաև Մարկոսի ընտանիքը) բնակության տեղափոխվել Ենիկալե (որը անցել էր Ռուսաստանին):

<sup>77</sup> «Присоединение Крыма к России», т. II, с. 259.

<sup>78</sup> В. А. Микаелян, Аттестаты Маркоса Кюмушли (Серебрякова) («Вестник общественных наук» АН АрмССР, 1977, № 2, с. 99—107; см. Крымский государственный архив, ф. Таврическое дворянское собрание, оп. 1, д. 355а, л. 1—10).

<sup>79</sup> В. А. Микаелян, указ. соч., с. 104.

մարտերին ղրիմահայոց մասսայական մասնակցությունը, որի համար թաթարները սպառնում էին ռուսական զորքերի դուրս գալուց հետո նրանցից վրեժխնդիր լինել<sup>80</sup>, սերտ աղերսներ ունենալով XVIII դարի երկրորդ կեսերին Անդրկովկասում Ռուսաստանի վարած քաղաքականության հետ. Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու հեռանկարը ոգեշնչել էր նաև ղրիմահայ համայնքներին և, ակներևաբար, հանդիսացել Ղրիմ և առհասարակ սևծովյան ափեր դուրս գալու նպատակով Ռուսաստանի վարած ռազմաքաղաքական ձեռնարկումներին զանգվածաբար սատար կանգնելու նրանց հեռատես դիրքորոշման հիմնական պատճառներից մեկը:

\* \* \*

Ղրիմահայոց կապերը Մոսկվայի և առհասարակ ռուսական շրջանների հետ ամենաբնորոշ դրսևորում են գտել հատկապես առևտրի բնագավառում: Մոսկվայի հետ ղրիմահայերի ունեցած առևտրական կապերին կարելի է հետևել տակավին XIV դարից, երբ Մոսկվայում ապրում էր Ղրիմից ելած վաճառականների մի մեծ բազմություն «սուրոժցի հյուրեր» («гости сурожане») անվան տակ: Կասկած չի կարող, որ այս «սուրոժցի հյուրերից» էր հայ վաճառական Աբրահամը, որի տանից 1390 թ. Մոսկվայում տարածվում է հրդեհը: «Загорелся посад за городом от Аврама некоего армянина»<sup>81</sup>, — հաղորդում է տարեգրությունը:

Ուլքե՛ր էին այս «սուրոժցի հյուրերը» իրենց ազգային կազմով և որտեղից էին նրանք գալիս Մոսկվա: Մի բան ակներև է, որ նրանք այդ անունը ստացել էին Ղրիմի Սուրոժ (Սուգդեա, Սուգդա) քաղաքից: Բայց դա ամենևին էլ չի նշանակում, թե նրանք բոլորը Սուրոժից էին, թեև նրանց մեջ կային նաև բուն սուրոժցիներ: Այս շրջանում Սուրոժի բնակիչների մեջ, ինչպես տեսանք, նշանակալից թիվ էին կազմում հայերը. Ֆ. Բրունի կարծիքով՝ նրանք քաղաքի բնակչության մեջ մեծամասնություն էին<sup>82</sup>: Բայց առայժմ խնդիրն այդ չէ, այլ այն, որ երբեմնի վաճառաշահ ծովափնյա քաղաք Սուրոժը իր անունը տվել էր ամբողջ Ղրիմին, կամ գոնե նրա հարավ-արևելյան շերտին, որի մեջ մտնում էին հյւսիսային Կաֆան, Սուրխաթը և այլք: Մի ժամանակ նույնիսկ այդ անունը կրել է նաև Սև ծովը<sup>83</sup>: Եվգենիոս IV պապը 1432 թ. օգոստոսի 18-ի իր կոնդակում Ղրիմի վերը նշված հատվածը համարելով «Մեծ Հայաստան», նրանում նստած իր ներկայացուցչին անվանում է Սուրխաթի եպիսկոպոս, իսկ եկեղեցին էլ (հավաքական առումով՝ ինչպես ասում ենք հայ եկեղեցի)՝ Սուրխաթի եկեղեցի: «Հարգարժան եղբայր Ավգուստինին՝ Սուրխաթի եպիսկոպոսին, Մեծ Հայաստանի այն մասերում, որտեղ Սուրխաթի եկեղեցին է գտնվում»<sup>84</sup>, — գրում էր Եվգենիոսը: Չմոռանանք, որ սա հղվում էր մի ժամանակ, երբ Սուրխաթի կորցրել էր իր երբեմնի նշանակությունը, բայց եկեղեցական թեմը, ուրեմն և նրան ենթակա տարածքը, ավանդաբար շարունակում էր պահպանել իր անվանումը, ճիշտ այնպես, ինչպես դարեր շարունակ, որպես այդպիսին, Ղրիմի եկեղեցին կոչվում էր Գոթֆրիայի եկեղեցի, թեև գոթերի հետքն անգամ չէր մնացել: Ուրեմն, թեև Սուրոժը կորցրել էր իր նախկին նշանակությունը, բայց XV դարում և մի փոքր ավելի ուշ շրջանում էլ «սուրոժցի հյուրեր» անվանումը, հավանաբար, շարունակում էր գործածվել: Այսպիսով, սուրոժցի հյուրերը դրանք Սուրխաթից, Կաֆայից, Սուրխաթից և այլ վայրերից եկած վաճառականներն էին:

<sup>80</sup> «Присоединение Крыма к России», т. II, с. 595.

<sup>81</sup> «Троицкая летопись», с. 436, ПСРЛ, т. XVIII, с. 140.

<sup>82</sup> Ф. Брун, Черноморье, II, Одесса, 1880, с. 140.

<sup>83</sup> ЗООИД, т. V, с. 831, տե՛ս նաև А. Н. Веселовский, Южно-русские былины, СПб., 1884 («Сборник отделения русского языка и словесности Академии наук», т. XXXVI, № 3, с. 69—70).

<sup>84</sup> «Крымский сборник», с. 135.

Ազգային կազմով թեպետև խայտաբղետ, բայց նրանց նշանակալից զանգվածը, հավանաբար, հայեր էին, թեկուզև այն պատճառով, որ լատինական աղբյուրներում Ղրիմի «Մեծ Հայաստան» կոչված այս տարածքի բնակչության շոշափելի մասը հայեր էին, որոնց ձեռքում էր գտնվում նաև թերակզգու առևտրատնտեսական գերազանցությունը XIV—XV դարերում: Բացի այդ, պահպանված առատ տեղեկություններն էլ լրացնում են այդ հետևությունը: Սուրոժցի հյուրերից էր ոչ միայն վերը նշված Աբրահամը, այլև Դմիտրի Դոնսկոյին Կուլիկովյան նշանավոր ճակատամարտում զինվորական և դիվանագիտական ծառայություն մատուցած տասը վաճառական սուրոժցի հյուրերը<sup>85</sup>, որոնք, ամենայն հավանականությամբ, գոնե հիմնականում հայեր էին<sup>86</sup>:

XV դարում Ղրիմ-մոսկովյան առևտուրը հիմնականում ընկած էր նախ հայ, ապա հույն և ռուս վաճառականների ուսերին. Պողոսը, Բաբեկը, Ավետիքը, Գրիգորը, Սարգիսը և ուրիշներ, որոնց մասին այլ առիթով խոսել ենք, զրիմահայ այն ունևոր վաճառականներից էին, որոնք ճանաչված էին նաև Մոսկվայում և նրա տերություն քաղաքներում:

XVI դարում ևս, չնայած ջենովական առևտրական գաղթակետերի վերացմանը և թաթարական խժոժություններին, Ղրիմ-մոսկովյան առևտուրը ժամանակ առ ժամանակ աշխուժացման նշաններ է դրսևորում և այդ աշխուժացման մեջ նկատելի էր հայ և ռուս վաճառականների դերը: 1516 թ. Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան Վասիլի Անդրեևը Մոսկվա վերադառնալիս իր հետ է բերում նաև զրիմահայ վաճառականներ<sup>87</sup>, Ղրիմից և Թուրքիայից Ռուսաստան անցած և Ռուսաստանից Թուրքական տարածքներ ժամանած վաճառականների ազատ ու անարգելք գործունեության երաշխավորման համար սուլթան Սելիմը հատուկ հրովարտակ է ընդունում, որը 1516 թ. փետրվարին Կոորդովը Թուրքական դեսպան Իտյակ Թարխանի հետ բերում է Մոսկվա: Հրովարտակը պահանջում էր թույլ տալ Թուրքահայատակ և ռուսահայատակ վաճառականներին առանց որևէ արգելքի և վիրավորանքի, հովանավորության և պաշտպանության ներքո իրենց ազատ կամքով առևտուր անել՝ Թուրքական և ռուսական տարածքներում<sup>88</sup>, Ռուս և զրիմահայ վաճառականների առևտրական կապերը արդեն այս շրջանում այնքան էին սերտացել, որ նրանք նույնիսկ առևտրական համատեղ քարավաններ են կազմում: 1524 թ. Մոսկվայից Ղրիմ է գալիս 300 հայ և ռուս վաճառականների քարավանը, որը չնայած սուլթան Սելիմի վերը նշված հրովարտակի հավաստիացումներին, ենթարկվում է թաթարների ավազակային հարձակմանը:

Այս շրջանում զրիմահայ և մյուս վաճառականների կողմից Մոսկվա բերված ապրանքների մեջ գերակշռում էին մետաքսը, մետաքսյա, բամբակյա և բրդյա գործվածքները, ներմուծման ապրանքների մեջ էին մտնում նաև նուշը, հունական ընկույզը, շաքարը, սանրերը, գլխաշորերը, զարդարանքի իրերը, համեմունքները և այլն: Ղրիմը փաստորեն տարանցիկ առևտրի հենակետ էր և հենց դա էր, որ զրիմահայ առևտրական դասին մղում էր առաջին պլան՝ հիմնականում Արևելքի երկրներից և Վալաքիայից բերված այս ապրանքները Ռուսաստան առաքելիս: Ռուսաստանից արտահանվում էին տարբեր տեսակի մորթեղեն և մուշտակներ, ձկան յուղ. սրանց մի մասը սպառվում էր Ղրիմում, իսկ մյուսը արտահանվում էր Թուրքիա և Մերձավոր արևելքի այլ երկրներ<sup>89</sup>:

Ալեքսեյ Միխայլովիչի ժամանակ, Աստրախանով և Վոլգայով Մոսկվա անցած պարսկահայ վաճառականությանը զուգընթաց և դեպքից-դեպք էլ նրա հետ գործակցած Ռուսաստանում ժրջան առևտուր էին կատարում զրիմահայերը և Ղրիմի վրայով նրանց Թուրքահայ ազգակիցները: Այս շրջանում Մոսկ-

<sup>85</sup> ПСЛ, т. XI, с. 54 (բերում ենք ըստ Լ. Ս. Խաչիկյանի նշվ. հոդվածի, էջ 69—71):

<sup>86</sup> Լ. Ս. Խաչիկյան, նշվ. հոդվ., էջ 60—76:

<sup>87</sup> «Сборник русского исторического общества», т. 95, с. 236.

<sup>88</sup> Նույն տեղում, էջ 236—237:

<sup>89</sup> В. Е. Сыроечковский, указ. соч., с. 48—60.

վայում հանդիպում ենք բազմաթիվ ղրիմահայերի, որոնք, նեցուկ ունենալով իշխանությունների հովանավորությունը, իրականացնում էին իրենց առևտրական գործարքները: Նրանցից էին, օրինակ, Աջիբոլն ու Յակովլևը, Ֆյոդոր Իվանովը, Վասիլ Մերկուրևը, Մանսուրովը, Բաղդասարովը, Իվանովը և շատ ուրիշներ: Նրանցից շատերը, ինչպես վկայում են պաշտոնական փաստաթղթերը, գերադասում էին բերված ապրանքների (այդ թվում նաև իրենց ազատագրած ռուս մարդկանց) դիմաց ստանալ մորթեղեն: Վերջինս Ղրիմում և արտասահմանում գնալուն ապրանք էր և այդ պատճառով էլ ղրիմահայ վաճառականները այն գերադասում էին մյուս ապրանքներից:

XVIII դարում ևս ղրիմահայ վաճառականության գործունեությունը հյուսիսի երկրներում և մանավանդ բուն ռուսական շրջաններում նկատելի չափերի էր հասնում: Հյուսիսի հետ առևտրի զարգացման պահանջն էր, որ թերակղզու հյուսիսային պարանոցում կյանքի կոչեց զուտ հայկական մի այնպիսի առևտրական հենակետի ստեղծումը, որպիսին Արմյանսկի Բազարն էր: 1711 թ. ռուսական իշխանությունները Ազով քաղաքի մոտ ձերբակալում և իզլում քաղաքն են տեղափոխում 8 հայ և 9 հուլյն վաճառականների՝ իրենց բերած ապրանքներով<sup>90</sup>: Սա հարկադրական մի քայլ էր, որին ուղեկիս-չուղեկիս պիտի դիմեին ռուսական իշխանությունները Պետրոս I-ի Պրուտի արշավանքի շրջանում, երբ Շվեդիայի դրդամբ Թուրքիան ռազմական գործողություններ էր սկսել Ռուսաստանի դեմ: Բայց փաստաթղթից պարզ երևում է իշխանությունների տարբերակված մոտեցումը՝ բանտ է ուղարկվում միայն թուրքը: Հաշորդ տարում, թեև պատերազմը Թուրքիայի և Ռուսաստանի միջև չէր դադարել, շատ ղրիմահայեր արդեն առևտուր էին անում Կիևի նահանգում: Սրանց թույլ է տրվում (1711 թ. Թուրքիայի հետ կնքված պայմանագրի համաձայն) վերագրանալ Ազով: Հետաքրքիր է հայ վաճառականների մոտ ցուցակագրված ապրանքների անվանումը՝ զանազան մորթիներ, ոսկեղեն, մուշտակներ, ծածկոցներ, զենքեր, բյուրեղապակյա բաժակներ, հայելիներ, կաշիներ, տարբեր տեսակի կտորեղեն (այդ թվում նաև մահուղ), դեղորայք, մատանիներ, մոմ, սանրեր և այլն: Փաստաթուղթը թվարկում է հետևյալ հայ վաճառականների անունները՝ Ղափլանի որդի Իվան Պավլով, Վասիլ և Գրիգոր Վասիլևներ, Զարար Մելքոնով, Մելքոն Յակովլև, Ստեփան Պավլով, Իլյա Միխայլով<sup>91</sup>: Վերոհիշյալ ապրանքները, որոնց միայն մի մասը թվարկվեց, նրանք գնել էին արտահանման նպատակով և տեղական արտադրանք էին, հանգամանք, որ մատնանշում է արհեստագործության բավական բազմաճյուղ վիճակը Ռուսաստանում XVIII դարի սկզբներին:

XVIII դարի 20—30-ական թվականներին Ռուսական կայսրության մեջ ղրիմահայ վաճառականության գործարքների բնույթն ու ծավալը այնքան մեծ ընդգրկում ունեին, որ հարկավորություն էր զգացվել բուն խանության տարածքում Արմյանսկի Բազար առևտրական ֆակտորիայի հիմնադրմանը գրեթե միաժամանակ տարանցիկ առևտրի կարիքներին ծառայող մեկ այլ բազա ստեղծել խանության սահմանամերձ ռուսական տերիտորիայի, այն էլ առևտրահարմար այնպիսի մի անցուղու վրա, որպիսին նեժին քաղաքն էր: Այդ հենակետը հիմնում է ղրիմահայ վաճառական Կարապետը: Պահեստաշենքերից, իջևանասենյակներից և խոհանոցներից կազմված առևտրական այս համալիրը ղրիմահայ, պարսկահայ և արևմտահայ վաճառականները տարանցիկ առևտրի միջնորդակետ դարձնելով և ապավինելով ռուսական իշխանություններին ծանոթ նիժինում հաստատված ղրիմահայերի օգնությանը և միջնորդությանը, Ռևիրահնայում և Ռուսաստանում լայն առևտուր էին կատարում: Կարապետը, ֆակտորիայի տերն ու գլխավորը, Ղրիմի Կոզլով քաղաքից էր, և ամուսնանալով ռուս կնոջ հետ, 20-ական թվականներին հաստատվել էր նեժինում: Ռուսական իշխանությունների մոտ վայելած վստահության և ծանոթակցական

<sup>90</sup> ЦГАВМФ, ф. 233, оп. 1, д. 19, л. 35—36.

<sup>91</sup> Նույն տեղում, գ. 54, թ. 153—158:

կայերի շնորհիվ նա կարողանում էր այլևայլ վայրերից եկած հայ վաճառականներին պաշտոնական միջնորդի ծառայություն մատուցել, օգնել նրանց անցնել ուսական սահմանը, իսկ այնտեղից վերադառնալ Ղրիմ և արտասահման: Նիժինը փաստորեն դարձել էր մեծածախ առևտրի նշանավոր մի կենտրոն, ուր հայերի (և առաջին հերթին ղրիմահայերի) բերած ապրանքները կուտակվում էին և ապա նոր բաց թողնվում վաճառքի՝ թե տեղում, թե Կիևում և թե Մոսկվայում և այլուր<sup>92</sup>: Իր նման դերով Նեժինի հայկական առևտրական այդ կենտրոնը XVIII դարի 20—30-ական թվականներին հայ-ուսական տրանսպորտային առևտրային կարևոր օղակներից էր:

1736 թ. մայիսին հուլյն վաճառական Իվան Յանովսկու կասկածելի հաղորդումը առիթ է դառնում, որ գեներալ-ֆելդմարշալ կոմս Միննիխը հրաման արձակի Կարապետին ժամանակավորապես Գլուխով տեղափոխելու և հսկողության տակ վերցնելու մասին՝ պարզելու համար նրա թուրք-թաթարական գործակալ լինելու վերաբերյալ մեղադրանքի իսկությունը: Սա մի ժամանականակ էր, երբ ուսական իշխանությունները հարկադրված էին ցուցաբերել գերզգուշություն. 1736 թթ. ապրիլի վերջերին ուսական զորքերը, զարգացնելով առաջնադասումը, գրավեցին Պերեկոպը և արշավեցին թերակղզու խորքերը: Հաջորդ տարում տեղի ունեցավ ուսական զորքերի երկրորդ արշավանքը դեպի Ղրիմ՝ գեներալ Լասսի հրամանատարությամբ: Կարապետին ներկայացված մեղադրանքը չի հաստատվում, սակայն երկարատև հարցաքննության նյութերը, և հատկապես նրա մոտ պահպանված հայերեն, հունարեն, թուրքերեն, ուկրաիներեն, լեհերեն և լատիներեն նամակները, որոնք հեղինակները վաճառականներ էին, լույս են սփռում այդ ֆակտորիայի ծավալում գործունեության վրա: Այդ նամակներից և հարցաքննության նյութերից պարզվում է, որ առևտրական գործերով ուսական սահմանը անցնելու անցագրերի ձևակերպման և առևտրի նպատակահարմարության մասին անհրաժեշտ տեղեկություններ ստանալու խնդրանքով Կարապետին դիմել էին այլևայլ վայրերի հայ վաճառականները: Նրան էին դիմել, օրինակ, ղրիմեցի հայ վաճառականներ Ասատուրը, Հովհաննեսը, Ղուկասը, Միքայելը, Պողոսը, Թովմասը, թոխատեցի Աբրահամն ու Մարտիրոսը, էրզրումցի Պետրոսը, պարսկահայ Մարտինն ու Պետրոսը, Մոսկվայում վաճառականությամբ զբաղված վրացահայ Արտեմն ու շատ ուրիշներ<sup>93</sup>: Կարապետի որդի Գրիգորն, օրինակ, 1734 թ. հոկտեմբերի 24-ին Կրեմենյուկից հորը իրազեկում էր, թե պետք է հայտնել Նեժինում գրտնրվող բոլոր ղրիմահայ վաճառականներին, որ ճանապարհն աղատ է և Պուտավայում թույլտվություն վերցնելով՝ նրանք կարող են անցնել սահմանը և գնալ Ղրիմ: Նույն թվականին ղրիմահայ վաճառական Ասատուրը Մոսկվայից հարցնում էր, թե հնարավոր է արդյոք անցագիր ստանալ Կիևի վրայով արտասահման մեկնելու համար: Ուկրաինական քաղաքներում գինու առևտուր անող բախչիսարայցի Հովհաննեսը 1735 թ. դեկտեմբերին Պուտավայից գրած հատուկ նամակով Կարապետից խնդրում էր իրեն տեղեկացնել, թե ինչու հունահայատակ և թուրքահայատակ վաճառականները կարող են ազատ կերպով անցնել արտասահման, իսկ ղրիմեցի վաճառականները՝ ոչ: Ղրիմեցի հայտնի վաճառական Պողոսը, որը առևտուր էր անում Ուկրաինայում, Կարապետից խնդրում էր միջնորդել իշխանությունների առաջ՝ իրեն անցագիր տալու համար: Կարապետը այդ բոլոր նամակների հեղինակներին տվել էր գործնական պատասխաններ, որոնք ցույց են տալիս ուսական իշխանությունների թույլտվությամբ և հովանավորությամբ գործելու նրա իրավունքները:

<sup>92</sup> Архив внешней политики России, ф. Сношения России с Арменией, оп. 100/1, 1736—1738, д. 6, л. 1—31, տե՛ս նաև В. Микаелян, В. Мартиросян, Материалы по истории армянского купечества в России («Вестник общественных наук» АН АрмССР, 1978, № 4, с. 79—99).

<sup>93</sup> В. Микаелян, В. Мартиросян, указ. соч., с. 85—95.

Հարցաքննության ժամանակ պարզվում է, որ Ղրիմահայ շատ վաճառականներ XVIII դարի 20—30-ական թվականներին Ղևրահնական և ռուսական տարածքներում երկարատև և ծավալուն գործունեություն են ունեցել: Նրանցից էին Ասատուրը, Հովհաննեսը, Պողոսը, որը վեց տարի անընդմեջ սոևետուր էր անում Նեժինում և այլ քաղաքներում, Սիմոնովը, «նշանավոր վաճառական Կոզլովի բնակիչ թովմասը», որը «15 տարուց ի վեր ապրանքներով գալիս էր Սալոռուսիա, որին գիտեին ռուս շատ վաճառականներ» և ուրիշներ:

Այսպիսով, XV դարի վերջին քառորդից սկսած մինչև Ղրիմի միացումը Ռուսաստանին տավրիկյան հայերը առաջատար դեր են խաղացել սլավոնական աշխարհի և մասնավորապես Մոսկովյան իշխանության (ավելի ուշ նաև ռուսական պետության) մինչև եղած քաղաքական և առևտրական կապերում, աչքի ընկած գործունեություն ցուցադրելով և՛ դիվանագիտական-քաղաքական, և՛ առևտրա-տնտեսական մարզերում:

## ТАВРИЧЕСКИЕ АРМЯНЕ И РУССКО-СЛАВЯНСКИЙ МИР

ВАРДГЕС МИКАЕЛЯН

### Резюме

Связи армянского народа с русским, украинским, польским и другими славянскими народами имеют вековую историю. С XII—XIII вв. обосновавшись на Крымском полуострове, представители различных слоев крымских армян, в частности купечества, принимали активное участие в сношениях Крымского ханства с Украиной, Польшей и особенно с Россией. Историю этих сношений можно проследить начиная с XIV в., участие же в них крымских армян приняло широкие масштабы в XV—XVIII вв. Оно проявлялось в двух основных направлениях: политическом и торгово-экономическом, в частности, на дипломатическом поприще и в оживленной купеческой деятельности.

Со второй половины XV в. торговые и дипломатические отношения между Московским государством и Крымом приняли более оживленный характер и широкие масштабы, что имело важное значение и для армянских поселений Крыма. Имевшие давнишние связи с русским народом армяне и здесь, в Крыму, обращают свои взоры к великой северной державе, симпатизируя ее продвижению к берегам Азовского и Черного морей.

Однако сношения крымских армян с русскими имели более давнюю историю. Еще в 1062 г. галицийский князь Феодор Дмитриевич обратился с грамотой, как предполагают, к армянам Крыма, приглашая их жить в пределах своего княжества и обещая им привилегии. В XIII—XIV вв. между армянами и русскими имелись непосредственные контакты в самом Крыму в качестве соседних христианских общин. Этот факт нашел отражение в уставе Каффы 1316 г., в котором сказано: «Консул Каффы не может распоряжаться той землей, на которой *издревле* (курсив—В. М.) находятся церкви греков, армян и русских и их монастыри». В этот период сугдейские (судакские) и кафские армяне освобождали русских пленных, угнанных во время татарских нашествий в Крым.

В результате развития торговли крымских армян в пределах Московского государства еще в XIV в. в Москве появились «гости-Сурожане», большинство которых состояло из крымских армян. В течение

XV—XVIII вв., вплоть до присоединения Крыма к России, крымские армянские купцы вели развернутую деятельность в самой Москве и в разных местах русского государства. В 30-ых годах XVIII в. оживленная сухопутная торговля с севером и западом на северном перешейке полуострова вызвала к жизни важный посреднический пункт торговли—Армянский Базар (Армянск). Основавшие его перекопские армяне во многом стимулировали также развитие торговли с Россией. В это же время группа крымских армян во главе с известным кезловским (евпаторийским) купцом Карпетом непосредственно на русской пограничной территории—в г. Нежине—создала торговую факторию, которая обслуживала торговлю России с Крымом, Турцией и Персией. Армянское купечество, развернувшее кипучую деятельность в России, явилось провозвестником начинаний Исаэля Ори. В числе этого купечества было немало крымских армян, стремившихся в меру своих сил способствовать осуществлению политики России в Закавказье и на Ближнем Востоке. Во время русско-турецкой войны 1768—1774 гг. и в последующий период крымские армяне на поле битвы и на дипломатическом поприще показали образцы служения России, всеми силами способствуя мероприятиям Екатерины II и А. Т. Потемкина по присоединению Крыма к России и переселению крымских христиан в Азовскую губернию. Одним из таких деятелей был небезызвестный Маркос Кюмушли—отец будущего адмирала Л. М. Серебрякова (Арцагаторцяна). За свои военные и дипломатические заслуги перед Россией М. Кюмушли был удостоен высоких правительственных наград и вознаграждений.